1364

511(076)
Г-44

2010

511(076)
Հ-1140

ՀԱՐՑՄԱՆ-ՊՈՒՉԱՄԻ

ԻՐԱՑՐՋԱՆՆԵԻ ՎԵՐԱՄԻԱՄ

ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Գ. ՏԱՐԻԱՅ ԴԱՍԸՆԹՆՑՔ

Դասատուների ուշադրութիւնը հրաւիրւում է յառաջաբանի և լրացուցիչ դիտողութիւնների վրայ

Գ. բարեփոխուած և զարձեալ լրացրած տպագրութիւն

Փոխադրեց
Ս. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ

510
0²-ՀԱ

Գինն է 35 կոպ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան «ԷՊՕԽԱ» Մուղեյսկի փող., № 3։
1914

ՀԱՐՏԱՐԱՆ-ԹՈՒՂԹԵՐՈՒ

ԻՐԱՑՐՂԱՆՆԵՒ ՎԵՐԱԾԻԱԾ

ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Գ. ՏԱՐԻԱՅ ԴԱՍԸՆԹՆՑՔ

Դասատուների ուշադրութիւնը հրաւիրւում է յառաջաբանի և լրացուցիչ դիտողութիւնների վրայ

Գ. բարեփոխուած և դարձեալ լրացրած տպագրութիւն

Փոխադրեց
Ա. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ

Գինն է 35 կոպ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԷՊՕԽԱ» Մուղէյսկի փող., № 8.
1914

36685 ա.հ.

510
50-Հ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Իսկապէս պահանջւում է, որ թւաբանական խնդիրների ժողովածուներն առանձին ձեռնարկներ ունենան. բայց մանաւանդ մեզանում առհասարակ այնպէս է պատահում, որ ժողովածուն իր համար է, մնում, ձեռնարկը՝ իր։ Ուստի հարկ համարեցի հէնց այս դասագրքում մի քանի բացատրութիւններ տալ՝ մասնաւորապէս սորա առանձնայատկութիւնների մասին։

Այս ժողովածուն կազմւած է գլխաւորապէս Հարտման և Ռուզամ հեղինակների «Թւաբանութեան գիրք գերմանական քաղաքային և գիւղական դպրոցների համար» դասագրքից։ Գործնական խնդիրները մասամբ լրացրել եմ Թիմէ-Շլոսէրի, Կլաուկէ Կլայնի, Բէէցի, Բեօմէի, Բիւտնէրի, Մագնուս-Վենցելի, Կենտենիխ-Կրոյցի, և Հենչել-Այկէի, Հենչէլ-Կեօլչի ժողովածուներից քաղւածներով, ինչպէս նաև իմ կազմածներով։ Հարկ եմ զգացել տեղ տեղ իրաշրջանները նաև վերամշակել։ Հրատարակածս ժողովածուն բնորոշելու համար՝ ես այն անւանել եմ «Իրաշրջանների վերածւած թւաբանական խնդիրների ժողովածու»։ Վերոյիշեալ հեղինակների մի մասը վերջերս ձգտում է թւաբանական խնդիրները զանազան իրաշրջաններից այլևս խառն չտալ, այլ որոշ իրաշրջաններով առանձին-առանձին համախմբել։ Այս տեսակէտից աւելի աչքի են ընկնում այլ և այլ շկոլաների տարածւած դասագրքերից Հենչէլի ժողովածուի Այկէի վերամշակածը, Բէէցի, Կլաուկէ-Կլայնի, Թիմէ-Շլոսէրի և Կենտենիխի ժողովածուները։ Բայց սրանցից ոչ մէկում այդ կարևոր սկզբունքը դեռ այնպէս հետևականութեամբ, ընդարձակ չափով իրագործւած չտեսայ, ինչպէս Հարտման-Ռուզամի ժողովածուի մէջ։ Ընթերցողը կը տեսնի, որ այս գրքում դպրոցական, ընտանեկան, երկրագործական և այլն հանգամանքներից վերառած խնդիրները ոչ միայն համախմբւել են, այլ և տեղ-տեղ մի շարք խնդիրներ օրգանապէս իրար հետ միացել են։ Փոխադրողի փորձառութեամբ և կարծիքով՝ այսպէս դասաւորւած խնդիրներն աւելի հարցասիրութիւն են առաջացնում

տաների մէջ, աւելի կենդանութիւն են մտցնում նրանց պարապմունքի մէջ *)։

Ինչ վերաբերում է թուաբանութեան ուսուցման մեթոդին, այդ մանրամասն պարզուած է Ռուդէի փոխադրածս մեթոդիկայում և իմ «Ուղեցոյցում»։ Առաջին գիրքը տալիս է թուաբանական նիւթերի ընտրութեան, դասաւորութեան և մշակման վերաբերեալ հիմնական սկզբունքներ, իսկ երկրորդը՝ ձևական աստիճաններով մշակման թէօրիան օրինակելի դասերի հետ։ Մեթոդիկայի մէջ կայ նաև մի առանձին հատուած՝ «Թուաբանական խնդիրների ժողովածուներ աշակերտների համար», որ բացատրում է այս կարգի դասագրքերի նշանակութիւնը և նրանց նկատմամբ մանկավարժութեան պատմութեան ընթացքում գրուած նաև ներկայիս պահանջները։ Հարցասէր ուսուցիչներին յանձնարարում եմ այդ գրուածքները։

Իսկ այստեղ խօսքս մասնաւորելով ներկայ ժողովածուի մասին՝ պէտք է տամ նաև հետևեալ բացատրութիւնները։

Երրորդ տարուայ ամբողջ դասընթացը, 1—1000 թուակարգը, վերածուած է 12 մեթոդական միութիւնների, որոնք արտայայտւում են առանձին-առանձին խրաշրջաններով։ Առաջին մեթոդական միութիւնը կրկնութեան խնդիրներից է կազմուած։ Շատ հեղինակներ տարուայ սկզբին այդ կարևոր են համարում՝ արձակուրդներին մոռացած բաները թարմացնելու, այս կամ այն թերութիւնները լրացնելու, արտայայտութիւնների մէջ միօրինակութիւն մտցնելու համար։

Հետևեալ իւրաքանչիւր մեթոդական միութիւն սկսւում է թուաբանական նիւթը՝ բնորոշող վերնագրով և ապա բացատրում է իւրաշրջանը որոշ իրական ու չափական հանգամանքներով։ Ես, այս հատուածից զատելով իւրաքանչիւր մեթոդիկան միութիւն բնորոշող խնդիրները՝ սրանց առանձնացրել եմ «Հիմնական խնդիրներ» վերնագրի տակ։ Սրանք, ինչպէս, մեթոդական միութեան նպատակն են արտայայտում **), որ դրւում է նոր դասի սկիզբը՝ դասարանի գիտակցութիւնը այդ նիւթի մէջ կենտրոնացնելու համար։ Մեթոդական միութեան երկրորդ մասը կազմում են վարժութիւնները, որոնք սկսւում են նախավարժութիւններով։ Սրանք, ըստ ձևական աստիճանների, զանազան ուղղութեամբ վարժութիւններ

*) Տես այս խնդրի ծագումն ու զարգացումը Ռուդէի «Մեթոդիկայում» 357—370 եր.

**) Տես իմ «Ուղեցոյցի» 15 եր.

են՝ իբրև ուսուցման առաջին աստիճան կամ նախապատրաստութիւն (անալիզ)։ Իւրաքանչիւր մեթոդական միութեան մէջ կենտրոնական դիրք է բռնում այս կամ այն հաշւետեսակը, այսինքն՝ հաշւելու նոր դէպքը և սրա եղանակը։ Այս հատուածն ուրեմն բնորոշում է դասընթացի յառաջադիմութիւնը։ Այս խնդիրները ուսուցման երկրորդ աստիճանն, յանդիմանարարութիւնն (սինթէզ) են կազմում։ Այս կարգի վարժութիւնները շատ տեղ են բռնում այս գրքում. սրանք յատկապէս վերացական թւերից են կազմուած և բացի X և XII միութիւններից՝ բանաւոր խնդիրներ են։ Վերոյիշեալ բոլոր գերմանացի հեղինակները առաջին երեք տարիներում այս տեսակ վարժութիւններին առանձին նշանակութիւն են տալիս և նոյնպէս ընդարձակ չափերով ընդունել են իրենց ժողովածուների մէջ։ Այս վերացական թւերով խնդիրները (օրինակները) այնպիսի ձևերով են կազմուած, որ աշակերտներին, որքան կարելի է, ինքնուրոյն լինելու առիթներ ներկայացնեն։ Նրանք այդ ընդհանուր ձևերով՝ առանց ամեն րոպէ ուսուցչի միջամտելուն՝ իրանք էլ խնդիրների շարքեր են կազմում։ Դասագրքերի վերջը դրուած «օրինակներն» առհասարակ իրանց համար առանձնացած մնում են և առնչութիւն չեն պահպանում միւս խնդիրների հետ։ Այնուհետև գալիս են այնպիսի խնդիրներ, որոնք ուսուցման երրորդ աստիճանին կամ զուգորդութեանն (ասոցիացիա) են վերաբերում՝ համեմատութիւններ, կապակցութիւններ և ուրիշ նմանօրինակ վարժութիւններ։ Սրանից յետոյ գալիս են համադրութեանը (սիստեմին) կամ չորրորդ աստիճանին վերաբերեալ խնդիրները։ Հեղինակն այստեղ դրել է նաև աշակերտների կողմից խնդիրներ կազմելու պահանջը, որ իսկապէս լաւ կը լինէր հինգերորդ աստիճանին կամ գործադրութեան հետ միացնել։ Վերջապէս՝ տրւում են գործադրութեան, հինգերորդ աստիճանին վերաբերեալ խնդիրներ, որոնք, աննշան բացառութեամբ՝ կիրառեալ կամ գործնական խնդիրներ են՝ իրական կեանքի այս կամ այն շրջանից քաղուած և օրգանապէս համախմբուած։

Ինչպէս տեսնում ենք, թուաբանական խնդիրներն այսպէս դասաւորելով հեղինակը չափազանց դիւրացնում է այն դասատուների գործը, որոնց համար թուաբանութեան դասաւանդութիւնը միայն կիրառեալ խնդիրների լուծման կամ հինգերորդ աստիճանի մէջ չէ կայանում։ Այս ուղղութեամբ ուսուցման ամբողջ պրոցէսը քայլ առ քայլ անցնում են սանները։ Նրանք հաճոյքով մասնակցում են այդպիսի աշխատութեան, որ նրանց տաղտկալի

միօրինակութիւնից ազատելով՝ գիտակցական և ինքնուրոյն աշխատութեան ճանապարհն է ցոյց տալիս *)։ Լաւ յիշում եմ համալսարանական վարժոցի մեր պրակտիկայից Ենայում, երբ մեր սաները շատ անգամ ուսանող-պրակտիկանտներին յիշեցնում էին ուսուցման այս կամ այն պրոցեսն այս խօսքերով. «պարոն ուսուցիչ, մենք համեմատելը մոռացանք, մենք ինքներս խնդիրներ չկազմեցինք» և այլն։ Այո, հոգեբանութեան պահանջներին համապատասխան ուսած աշակերտները սիրում են նոյն ընթացքով պարապել. Նրանք մի անգամ այդ մեթոդի համը առնելով, ուղղակի միշտ այդպէս մտածելու, աշխատելու պահանջ են զգում։

Այն մեծ մեթոդական միութիւնները, որոնց մէջ մի քանի հաշւետեսակներ կան, կարելի է մանր մեթոդական միութիւնների վերածել, իւրաքանչիւրի համար առանձին հիմնական խնդիր (նպատակ) դնելով։ Ամենալաւն այն կը լինէր, եթէ ուսուցիչներն իրանք կազմէին հիմնական խնդիրները, նայելով իրանց դասարանների հանգամանքներին։ Դասագրքերում դրւածները (հեղինակի կամ իմ կազմածները) իսկապէս՝ իբրև օրինակներ պէտք է ծառայեն։ Այս մանր միութիւնների մշակումը, նայելով հանգամանքներին՝ կարելի կը լինի կամ մինչև վերջը առանձին տանել, կամ միացնել մեծ միութեան անդամներին զուգորդութեան ստանձանում։

Այսպէս թէ այնպէս՝ ինչպէս որ Բիւտներն ասում է, դասատուն պէտք է ժողովածուից բարձր կանգնած լինի. պէտք չէ, որ նա ստրկօրէն նրան վերաբերւի. դասատուն չպէտք է կարծէ, որ գրքի առաջին խնդրից մինչև վերջինը պէտք է լուծել տայ։ Նայելով իր դասարանին՝ նա պէտք է աւելի կամ պակաս քանակութեամբ խնդիրներ տայ, սրանց կարգը պէտք է փոփոխէ։ Երրորդ տարւայ համար կազմւած այս ժողովածուից աւելի զանց առնել կարելի կը լինի նախավարժութիւններից հաշւետեսակներից և հաշւետեսակների վարժութեան սխեմակների այս կամ այն շարքերը։

Այս ժողովածուի մէջ աւելի տեղ են բռնում բանաւոր խնդիրները, որոնք պէտք է գերակշռեն առաջին երեք տարիներում, ինչպէս որ մեր ծրագիրն էլ պահանջում է։ Իսկական գրաւոր խնդիրներ գրաւոր լուծման ձևերով, տալիս են X և XII մեթոդական միութիւնները, թէև գրաւորներ էլ կան նաև VI միութիւնից էլ սկսած։

*) Այս տարի Ներսիսեան դպրոցի վարժոցում այս դասագրքով անցանք։ Դասարանն այնպէս ոգևորւած էր, որ շարունակ տնային աշխատութեան նիւթ էր խնդրում։

Դասատուն այս դէպքում էլ պէտք է հաշւի առնէ իր դասարանի ոյժերը։ Եթէ դասարանը վարժ չէ բանաւոր խնդիրներ լուծելուն, մանաւանդ գործնական բանաւոր խնդիրները նրանց դժւարութիւն են պատճառում. այս դէպքում աւելի բարդ խնդիրները ուսուցիչը գրաւոր կը տայ։ Այնպիսի խնդիրներ էլ են լինում, որոնք միջին դիրք են բռնում, երբ աշակերտները դասագրքերը կամ գրատախտակին գրած թւերն առջևնին ունենալով՝ խնդիրները լուծում են առանց գրելու։

Խնդիրների մէջ կան նաև տակտով հաշւելիքներ։ Այս վերացական թւերով շարքերի իւրաքանչիւր գործողութիւն աշակերտներն հետզհետէ անմիջապէս իրանց մտքում կատարում են ու ամեն անգամ միայն վերջին թիւը մտքներին պահում։ Երբ ուսուցիչը ամենավերջին գործողութեան թիւն ասում է, նրանք էլ հենց միայն վերջին գործողութիւնը կատարելով՝ պատասխանն անմիջապէս ասում են։ Աշակերտները շատ են սիրում այս մրցման վարժութիւնը. առանձին թարմութեան պատճառ է լինում այս և նրանց յիշողութիւնը շատ զարգացնում է։

Տեւական վարժութիւնները օրական 5—8 րոպէ տևող օրինակներ են այն տարրերից, որոնք հիմնական նշանակութիւն ունեն և որոնց մոռնալով աշակերտները ամեն քայլափոխում խոչընդոտների են հանդիպում։ Այս տեսակէտից բազմապատկման ու բաժանման աղիւսակները առաջին տեղն են բռնում։ Այսպիսի վարժութիւններ կատարում են դասի սկզբին և ապա հիմնական նիւթին անցնում։

Խնդիրների մէջ գործածւում է 6,51 մեթ. 1,60 մեթ. և այլն տասնորդական ձևը։ Բայց այս ձևը տրւում է համառօտութեան համար և ոչ թէ իբրև տասնորդական կոտորակ։ Քանի որ այդ կարգի կոտորակները չեն անցել, այդ այստեղ դատարկ խօսք կը լինէր։

Անհ Հարտման-Բուզաժի դասագրքի էական առանձնայատկութիւնները։ Մեր բոլոր փորձւած ուսուցիչները կը վկայեն, որ մեր աշակերտները թւաբանութիւն չգիտեն, այն թւաբանութիւնը, որ իրական կեանքը նրանցից պահանջում է։ Իրական կեանքը, (շուկան, արհեստանոցը և այլն) գլխաւորապէս 1—1000 շրջանում բանաւոր խնդիրներ գործնական եղանակով լուծելու պահանջ է դնում։ Իւրաքանչիւր դասարան առհասարակ ունենում է մի քանի «մաթեմատիկոսներ» և սրանցով թւաբանութեան դասատուն իրան մխիթարում է, նրա խիղճը հանգիստ է մնում։ Նա

ցուցալի միամտութեամբ հրճւում է, երբ այդ «լաւ գլուխները» մի քանի րոպէում ամենադժւար «խորիմաստ» խնդիրները ուղիղ լուծում և ուրախ-ուրախ իրար են ներկայացնում։ Իսկ թէ այդ րոպէներին ինչ են մտածում ու զգում մնացած 30—35 աշակերտները, այդ նրա բանը չէ։ Ուսուցիչն իր պարտականութիւնը կատարած է համարում։ Ո՛չ, նա պարտական է մնում այդ յուսահատ երեխաներին և պատասխանատու նաև նրանց ապագայի համար։ Հայ ուսուցիչներից «զարգացուցիչ» խնդիրների սիրահարներ, թողէք այդ. լաւ նայեցէք իրական պահանջներին. ձեր կեանքում դուք երբ էք պահանջ զգացել «աւազաններ», «հանդիպումներ» և այլ խճճւած անվերջ խնդիրներ լուծելու։ Վերջապէս այնքան ձեռնարկներից ոչ մէկի մէջ չկան այդպիսի շինծու խնդիրներ։ Թւաբանական այն խնդիրները ճշմարտապէս զարգացուցիչ կարող են լինել, որոնք արտայայտում են բնութեան, հայրենիքի, տնտեսութեան և այլն իրերն ու երևոյթները չափական կամ քանակական կողմից։ 1—1000 հազար շրջանը շատ սահմանափակ էր՝ աւելի մեծ չափով իսկական զարգացուցիչ խնդիրներ այս դասընթացից կազմելու համար։ Հետևեալ տարւայ դասընթացում աւելի կարտայայտւի այդ նշանաւոր իդէան։ Այս ուղղութեամբ արւած փորձերը ապագայի աւելի ընտիր դասագրքերի սկիզբը պէտք է համարել։

Աւելորդ չի լինի այստեղ բացատրութիւն տալ նաև այն մասին, թէ ինչու մեր հայ դպրոցներին ես Հարտման-Ռուզամի ձեռնարկն եմ փոխադրութեամբ առաջարկում։ Բացի վերոյիշեալ ծանրակշիռ պատճառներից՝ Հարտմանի դասագրքերն այն արժանիքը ունին, որ նրանք մի հետազօտող հեղինակի աշխատութեան արդիւնքներն են։ Հարտմանը Հերբարտ-Ցիլլերեան շկոլայի ներկայիս ամենանշանաւոր թւաբան-մեթոդիկոսն է՝ շնորհիւ իր հիմնաւոր հետազօտութիւններից առաջանած նաև ընդարձակ թւաբանական ձեռնարկների և ուղեցոյցների։ Յոյս ունեմ, որ ներկայ փոխադրութիւնս մեր թւաբանութեան ուսուցիչներից հարցասէրների ուշադրութեանը կարժանանայ։ Յուսով եմ, որ նրանք այս ուղղութիւնն էլ փորձեն և ապա մամուլի մէջ կամ մասնաւոր նամակներով ինձ հաղորդեն իրենց դիտողութիւնները, ցանկութիւնները, որպէս զի ես ապագային այդ գործնականից բղխած արտայայտութիւններն ի նկատի ունենամ։

Յ. Տ. Մ.

1908 թ. օգոստոսի 5-ին

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Դասագրքերիս Գ. տարւայ դասընթացը հիմա բարեփոխւած և լրացրած լոյս է տեսնում Բ. տպագրութեամբ։ Կրկնութեան նոր խնդիրները քաղել եմ Գոլդենբերգի, Վիշնեսկու, Կոմարովսկու Սոկոլով Սախարովի ժողովածուներից։ Այս վերջին ժողովածուից խնդիրներ աւելացրել եմ նաև գրքիս վերջը դրւած խառն խնդիրներին։

Իբրև զննական լաւ միջոց Գ. տարւայ դասընթացի համար առաջարկում եմ պ. Յ. Արարատեանի թւաբանական համրիչ մեքենան։ Վերջերս նա աւելի մատչելի գներով էլ է շինել տալիս։ 1—1000 թւակարգի թւերն ու գործողութիւններն անհրաժեշտ է մի այսպիսի զննական միջոցներով ներկայացնել. սա շատ կը դիւրացնէ դասաւանդութիւնը։ Արժէ, որ ամեն դպրոց ձեռք բերէ այս համրիչ մեքենան։

Իրաշրջանների վերածւած խնդիրների ժողովածուներս հետզհետէ աւելի գրաւում են համակրողների շրջաններ։ Այս տարի միաժամանակ հրատարակածս Ա. և Բ. տարիների դասընթացով դասագրքերիս քառամեայ դասընթացն ամբողջանում է։ Թող հարցասէր ուսուցիչները փորձեն նաև այս դասագրքերը և չզլանան ինձ հաղորդել իրանց դիտողութիւնները։

Պարտականութիւն եմ զգում յատկապէս շնորհակալութիւն յայտնել պ. Գ. Ղազարեանին, որ այս դասագիրքս երկու տարի շարունակ գործածելուց յետոյ՝ ինձ հաղորդեց իր օր աւուր նկատած թերութիւնները և արած դիտողութիւնները, որոնցից շատ օգուտ քաղեցի այս երկրորդ տպագրութեան համար։

1910 թ. մայիսի 18-ին։ Յ. Տ.-Մ.

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Թւաբանութեան դասատուների ցանկութեանն ընդ առաջ գնալով, այս երկրորդ տպագրութեան մէջ աւելացրի աւելի բարդ կազմով խնդիրներ և տեսակների վերածւած խնդիրների շարքեր: Դասագիրքս շատ չստւարացնելու համար սկզբնական 1—2 հարցով բանաւոր խնդիրների աննշան մասը և բազմաթիւ օրինակների մի երրորդը զանց առայ:

Մնում եմ այն կարծիքին, որ այս դասակարգը նախկին դիրքով կարող էր բաւարարութիւն տալ այն դպրոցների երրորդ բաժանմունքներին, որոնք միացած են լինում Ա. և Բ. բաժանմունքներին հետ: Աւելի նպաստաւոր հանգամանքներում գտնւող դպրոցների համար այս հրատարակութեան մէջ աւելացրի 3—5 հարցով հեշտ լուծելի խնդիրներ թւով 142 Ա. Կոմարովի ժողովածուից, իսկ միջնակարգ դպրոցներ մտնելու պատրաստւողների համար նաև որոշ եղանակով լուծելի տիպիքական խնդիրներ թւով 115: Այս տեսակների վերածւած խնդիրները քաղւած են ժողովրդական դպրոցների մի խումբ ուսուցիչների ժողովածուից, որ կազմւած է Ն. Սոկոլովի և Ի. Սախարովի խմբագրութեամբ: Այս ժողովածուի համարեա իւրաքանչիւր տեսակից հիմնական խնդրի լուծման բացատրութիւնը տրւած է, իսկ իմ ժողովածուի մէջ՝ միայն ոչ սովորական, առանձին եղանակով լուծելի խնդիրների բացատրութիւնը:

1914 օգոստոսի 10 ին: Յ. Տ.-Մ.

ԵՐՐՈՐԴ ԸՆԹԱՑՔ

1—1000 ԹՒԱՆԱՐԳ

I. ԿՐԿՆՈՒԹԻՒՆ

1—1000 ԹՒԱՆԱՐԳՈՒՄ

Ա. ԻՐԱՇՐՋԱՆ

Նախընթաց տարիների իրաշրջանները

1 ռ.=100 կ. 1 տար=12 ամ 1 դժ=12 հտ

1 տար=52 շբ

1 շբ= 7 օր

1 օր=24 ժմ

1 ժմ=60 րպ

Բ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Գումարել և հանել

1. 6+7+4	**2.** 40+ 9	**3.** 40+10
4+8+5	5+30	50+16
8+3+3	46+ 3	70+28
8+7+4	52+ 7	20+53
6+6+7	56+ 7	47+30
4+5+9	63+ 8	29+70
9+3+7	88+ 4	16+60

4. 65+12
43+35
36+54
57+43
49+43
38+24
59+32

5. 22+15+33
35+24+11
47+18+24
18+15+26
24+36+27
64+17+19
29+29+29

6. 17+29+33
16+27+36
22+18+37
19+29+39
23+36+19
18+23+49
29+37+15

7. 80—60
90—50
70—30
100—40
87— 7
98— 5
56— 6

8. 84—64
72—52
95—45
87—23
96—74
58—36
50—34

9. 41— 6—7
82— 9—2
72— 5—4
65—15—7
72—12—8
92—16—6
88—14—7

10. 32—17—13
43—16—19
54— 9—28
65—38—19
76—15—32
87—63—15
100—25—56

11. 90—29—32
91—32—43
92—23—34
93—14—25
94—25—36
95—36—47
94—27—38

12. 100—45—46
100—45—55
100—62—33
100—39—42
100—71—23
100—66—36
100—19—64

13. 19+15—25
36— 9+28
23+27 35
38+43—34
72—27+35
93—39+28
18+42—35
27+63—48
100—72+35
25+58—39

14. 70—36+48
47+25—48
83—38+27
82—39+27
18+43—19
29+37—19
100—46+38
94—49—38
49—15+54
76—38+54

15. 43+33+12
24+36—15
82—39—19
81—42+21
25+45—24
83—48+27
90—51+33
37—54+36
24+57—39
100 · 63+45

16. Վարժութիւններ հաշւետախտակի վրայ *)։

Գումարել. 9+7, 9+5, 9+3 և այլն։ 20+28, 20+ +16, 20+14 և այլն։ 20+9, 18+7, 16+5 և այլն։ 27+25, 27+23, 27+21 և այլն։ 27+20, 25+18, 23+16 և այլն։ 9+7+5, 7+5+3 և այլն։ 20+18+16 և այլն։ 18+16+14 և այլն։ 27+20+9, 25+18+7 և այլն և այլն։

Հաշւետախտակ գումարման և հանման համար

9	7	5	3	1	10	8	6	4	2
20	18	16	14	12	19	17	15	13	11
27	25	23	21	30	28	26	24	22	29
38	36	34	32	39	37	35	33	31	40
45	43	41	50	48	46	44	42	49	47
56	54	52	59	57	55	53	51	60	58
63	61	70	68	66	64	62	69	67	65
74	72	79	77	75	73	71	80	78	76
81	90	88	86	84	82	89	87	85	83
92	99	97	95	93	91	100	98	96	94

*) Ինչպէս որ վերևի օրինակները ցոյց են տալիս, հաշւետախտակում նշանակած թւերի բազմապիսի կոմբինացիաներից բազմաթիւ խնդիրներ են կազմւում։

Հանել. 20—9, 18—7, 16—5 և այլն։ 27—9, 25—7, 23—5 և այլն։ 27—20, 25—18, 23—16 և այլն, և այլն։ 38—20—9, 36—18—7, 34—16—5 և այլն և այլն։

Գումարել և հանել. 27+20—9. 25+18—7, 23+16—5 և այլն, և այլն։ 27—20+9, 25—18+7 և այլն, և այլն։

17. Տակտով հաշիւ. ա) 47+3—10=? բ) 56—9+14=? գ) 94—35+24—37=? դ) 86—14—27+19+33=? և այլն, և այլն։

բ. Բազմապատկել, չափել, բաժանել

18.		19.		20.	
ա) 1×9	բ) 6×10	ա) 4×10	բ) 5×5	ա) 1=1X	բ) 18=6X
8×1	7×3	7×9	3×4	16=2X	35=7X
2×5	9×4	10×8	6×3	21=3X	24=8X
3×8	10×9	2×7	7×7	16=4X	18=9X
5×6	9×9	8×6	8×9	45=5X	100=10X

12.	22.	23.
60 : 10	2=2 : X	1×28
90 : 9	8=24 : X	2×39
40 : 8	1=5 : X	7×13
63 : 7	7=70 : X	10×10
40 : 5	10=90 : X	3×26
21 : 3	3=24 : X	9×9
1 : 1	9=54 : X	5×17

24.	25.	26.	27.
10×10	98=14×X	94 : 2	11=66 : X
11×9	92=23×X	96 : 6	15=75 : X
13×7	90=18×X	87 : 3	12=48 : X
14×7	80=16×X	80 : 5	17=85 : X
16×4	78=13×X	99 ; 9	14=56 : X
17×3	72=24×X	100 :10	24=72 : X
19×1	70=35×X	33 : 1	19=38 : X

28.	29.	30.
26-ի $\frac{1}{2}$	56-ի $\frac{1}{8}$	82-ի $\frac{1}{2}$
33-ի $\frac{1}{3}$	60 ի $\frac{1}{10}$	99-ի $\frac{1}{3}$
36 ի $\frac{1}{6}$	24-ի $\frac{1}{3}$	55-ի $\frac{1}{5}$
64-ի $\frac{1}{8}$	96 ի $\frac{1}{2}$	27-ի $\frac{1}{3}$
100 ի $\frac{1}{10}$	45-ի $\frac{1}{5}$	88-ի $\frac{1}{4}$
42-ի $\frac{1}{6}$	75-ի $\frac{1}{5}$	100-ի $\frac{1}{5}$
48 ի $\frac{1}{4}$	100-ի $\frac{1}{4}$	72-ի $\frac{1}{3}$

գ. Բարդ խնդիրներ

31.	32.	33.
2×39+17=	64 : 4+28=	7×9+18=
2×47−17=	88 : 4−18=	7×12−18=
38+2×27= *)	54+56 : 4=	24+7×7=
83−2×19=	92—92 : 4=	62−7×4=
92 : 2+35=	5×13+27=	56 : 7+56=
72 : 2−19=	38+6×9=	76+56 : 8=
56+56 : 2=	83−6×13=	96—96 : 8=
3×16+24=	96 : 6+45=	9×5+36=
3×24—38=	74—54 : 6=	9×9−48=
47+3×13=	6×12—36=	64−9×4=

դ. Վերածում եւ անդրադարձում։

34. Քանի հատ է 1 դիւժինն ու 5 հատը։ 2 դժ 3 հտ։ 5 դժ 6 հտ։

35. Քանի թերթ է 1 դաստան և 6 թերթը։ 3 դս. և 8 թր։ 2 դս և 20 թր։ 4 դս և 4 թր։

36. Քանի դիւժին և հատ կանէ 30, 52, 64, 73, 69, 85, 76, 61, 87, 98, 100։

37. Քանի ամիս է անում 3 տր և 6 ամ։ 4 տր 9 ամ։ 7 տր 3 ամ։ 8 տր 4 ամ։ 5 տր 10 ամ։ 2 տր 8 ամ։

38. Որքան օր է անում. 1 շբ 6 օրը։ 2 շբ 4 օր։ 4 շբ 5 օր։ 5 շբ 6 օր։ 7 շբ 2 օր։ 8 շբ 3 օր։

*) Այս և հետևեալ բոլոր օրինակներում նախ պէտք է բազմապատկման ու բաժանման գործողութիւնները կատարել։

39 Քանի ժամ է անում 1 օր 9 ժամը: 2 օր 15 ժմ: 3 օր 8 ժմ: 2 օր 16 ժմ: 2 օր 7 ժմ: 3 օր 19 ժմ:

40. Քանի տարի և ամիս է անում 23, 38, 45, 54, 75, 81, 92, 99, 56, 87 ամիսը:

41. Քանի շաբաթ և օր է անում 12, 20, 27, 38, 45, 57, 79, 90, 62, 83, 100 օրը:

42. Քանի օր ու ժամ է անում. 30, 40, 50, 64, 74, 43, 57, 70, 88, 100 ժամը:

43. Քանի հատ է $^1/_2$, $^1/_3$, $^1/_4$, $^1/_6$, $^1/_{12}$, դիւժինը:

44. Րոպէների դարձրու. $^1/_2$, $^1/_3$, $^1/_4$, $^1/_6$, $^1/_{12}$, $^1/_{10}$, $^1/_5$, ժամը:

45. Ժամերի դարձրու. $^1/_2$, $^1/_3$, $^1/_4$, $^1/_6$, $^1/_{12}$, օրը:

46. Շաբաթների դարձրու. $^1/_4$, $^1/_2$, տարին:

47. Ամիսների դարձրու. $^1/_2$, $^1/_3$ $^1/_4$, $^1/_6$, $^1/_{12}$, տարին:

48. 1 ամ+20 օր=օր	49. 1 մնթ—30 կ	50. 48 օր — 1 ամ
1 ամ+16 օր=օր	1 մնթ—45 կ	57 օր— 1 ամ
1 դժ+10 հտ=հտ	1 արշ — 12 վրշ	17 գր+18 գր
1 օր+20 ժմ=ժմ	2 արշ— 9 վրշ	39 գր+26 գր
1 օր +18 ժմ=ժմ	2 դժ — 4 հտ	8 վր+19 վր
1 օր+16 ժմ=ժմ	3 դժ — 9 հտ	90 կ —28 կ
1 օր+20 ժմ=ժմ	5 դժ —51 հտ	100 կ 33 կ

51. Ո՞ր երկու թւերը բազմապատկելուց կստացւեն. ա) 24, բ) 48, գ) 60, դ) 26:

52. 100-ը 50-ից որքան աւելի է: 49-ը որքանով պակաս է 90-ից:

53. Եթէ մի թւի աւելացնեմ 24, կստանամ 60: Ո՞րն է այդ թիւը:

54. 91-ից որ թիւը պէտք է հանել՝ 40 մնացորդ ստանալու համար:

55. Մի թիւ 3-ով բազմապատկելով՝ ստանում ենք 48: Ո՞րն է այդ թիւը:

56. Ո՞ր թիւը 25-ով աւելի է 8×7-ից:

57. 15-ը ո՞ր թւի 6-րդ մասն է:

58. Վեր առ 75 ի $^1/_3$-ը 4 անգամ:

59. Մէկ մանէթի քանի հատ ա) երկու կոպէկանոց, բ) հինգ կոպէկանոց, գ) տասը կոպէկանոց կարող ես ստանալ:

60 Քանի կոպէկ կանի՝ ա) $^1/_2$ մնթ+35 կ, բ) $^1/_4$ մնթ+48 կ, գ) $^1/_5$ մնթ+$^1/_{10}$ մնթ:

61. Քանի կոպէկ կանի՝ ա) $^1/_4$ [illegible]) $^1/_2$ մնթ. —36 կ:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI·1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
19980-59
1002/9788

Ե. Խառն գործնական խնդիրներ:

62. Քանի դպրոցական օր կը մնայ 12 շաբաթից, եթէ բացի կիրակի օրերից 3 էլ տօն օրեր լինին:

63. 13 շաբաթից քանի օր է մնում, եթէ 78 օր արդէն անցել է:

64. Պարոն Մարուսեանը ճամպայ գնաց ապրիլ 17-ին և վերադարձաւ մայիս 24-ին: Քանի շաբաթ և օր տևեց նրա ճամպորդութիւնը:

65. Մայիսի 4 ից 6 շբ. 5 օր անցնելուց յետոյ՝ ինչ ամսաթիւ կը լինի:

66. Երկաթուղու գնացքը ճամպայ ընկաւ Թիֆլիսից առաւօտեան 6 ժմ. 24 րպ. և Բագու հասաւ միւս առաւօտ 3 ժմ 22 րպ: Ո՞րքան ժամանակ ճանապարհին մնաց:

67. Գարեգինը 9 տր 5 ամս հասակ ունի, իսկ նրա եղբայր Արամը 2 տր 8 ամիս մեծ է: Քանի տարեկան է Արամը:

68. Ապրիլ 23-ին օրը 14 ժմ 13 րպ է տևում. որքան կը տևէ գիշերը:

69. Ռուզիկը երեկոյեան ժամը 8 ին անկողին է մըտնում և վեր է կենում առաւօտեան ժամը 7-ին. շաբաթական որքան ժամանակ նա պառկած է մնում:

70. Երբ որ Հեղինէն 6 տր էր, նրա մայրը նրանից 5 անգամ աւելի հասակ ունէր. հիմա Հեղինէն 15 տր է։ Քանի տարեկան է մայրը։

71. Եթէ 6 հոգի երկաթուղու տոմսակների համար 90 մանէթ են վճարում, որքան պէտք է վճարեն 5 հոգի նոյն ճամփի համար։

72. Սուրէնը մի գիրք գնեց 65 կ. և մի քանոն՝ 18 կ։ Իր 1 մանէթից նա որքան յետ ստացաւ։

73. Ամառը 1 ձուն արժէ 1 կ, իսկ ձմեռը 10-ին վճարում են 25 կ։ Ձմեռը տասնեակը որքան աւելի արժէ։

74. Աղի փութը հիմա 45 կ արժէ. Պետրոսը 1 մանէթից որքան փող յետ կստանայ, եթէ 2 փութ առնէ։

75. Քանի դիւժին ու հատ մատիտ կստանայ Աննան 28 կոպէկի, եթէ 2 հատը 1 կ արժէ։

76. Հայկը բերեց 3 կարմրախայտ ձուկ՝ հատը 9 կ, 2 շիշ քացախ՝ շիշը 16 կ, 25կ. էլ ձէթ։ Նա իր փողից յետ բերեց 16 կ։ Ո՞րքան փող էր նա ունեցել։

---

77. Քանի թերթ թուղթ է գրել Հմայեակը, եթէ նա իր հայերէնի տետրակում 45 երես է գրել, իսկ թւաբանութեան տետրակում՝ 39 երես։

78. Մարիամի տետրակը 12 թերթանոց է։ Ո՞րքան երես բաց է մնացած, (թերթը 8 երես հաշուելով), եթէ նա արդէն 68 երես գրել է։

79 Թւաբանական 22 խնդիրներից Արուսեակը սխալ է լուծել 2, Շուշանիկը՝ 5 և Աշխէնը 3։ Քանի խնդիր երեքը միասին ուղիղ էին լուծել։

80. Տիկին Թադէոսեանը երեք ու կէս դուժին կոճակ գնեց, իսկ բանեցրեց միայն երկուս ու մի քառորդ դիւժին։ Ո՞րքան կոճակ աւելացաւ։

81. Մարկոսը 42 արշին ժապաւէնից առաջ բանեցրեց 8 արշ, յետոյ 9 արշ և 6 արշ, Ո՞րքան աւելացաւ։

82. Մի գիւղացու բակում կար 24 հաւ, սրանց թւից 8 պակաս՝ բադ, 12 պակաս՝ սագ։ Ընդամենը որքան թռչուն կար այնտեղ։

83. Վարդենու 2 դիւժին 10 հատ կոկոններից 8 չըբացւեցին, բացւածներից 17 կարմիր էին, մնացածները՝ դեղին։ Ո՞րքանը դեղին էր։

---

84. Ուսուցիչը 4 դաստա թուղթ ունէր. այս թղթի մի երրորդական մասը նա բաժանեց 8 աշակերտների մէջ հաւասար չափերով։ Ո՞րքան թուղթ ստացաւ ամէն մի աշակերտ։

85. Մի երեխայ 72 երեսնոց գրքից օրական 8 երես է կարդում, իսկ մի ուրիշը 96 երեսնոց գրքից օրական 12 երես է կարդում։ Երեխաներից որն աւելի շուտ կը վերջացնի իր գիրքը։

86. Երեք քոյրեր 75 արշ կտաւ գործեցին. նրանցից միւսը 2 քոյրերի հետ միասին հաւասար չափով գործածից 3 արշին աւելի գործեց։ Ո՞րքան կտաւ էր գործել իւրաքանչիւրը։

87. Գիւղում 87 խրճիթ կար. հրդեհի ժամանակ 38 խրճիթներ այրւեցին, բայց յետոյ 46 նոր խրճիթ շինեցին։ Վերջը քանի խրճիթ եղաւ այդ գիւղում։

88. Գնւած է 7 սայլ խոտ, իւրաքանչիւրը 12 փութ քաշով։ Երեք ձիու քանի շաբաթ բաւական կը լինի այս խոտը, եթէ օրական 2 փութ տրւի։

89. Որսորդը աղւէսի 78 մորթ ունէր. մուշտակ կարողներից մէկին նա ծախեց բոլոր մորթերի վեցերորդ մասը, միւսին՝ երրորդ մասը, իսկ բոլոր մնացածները հաւասար չափով ծախեց երեք վաճառականների։ Քանի մորթ գնեց ամէն մի վաճառական։

90. Խանութպանը ֆունտը 3 կոպէկանոց 5 ֆունտ աղը խառնեց 5 ֆունտ 5 կոպէկանոց աղի հետ. բոլոր խառնուրդը նա ծախեց առանց շահ ու վնասի: Խանութպանը ի՞նչ գնով ծախեց խառնուրդի ֆունտը:

91. Խանութպանը խառնեց ֆունտը 3 կոպէկանոց, 6 ֆունտ բրինձը 5 կոպէկանոց 5 ֆունտ բրնձի հետ. բոլոր խառնուրդը նա ծախեց միենոյն գնով և 12 կոպէկ օգուտ ունեցաւ: Ի՞նչ գնով ծախեց խանութպանը խառնուրդի ֆունտը:

92. Պետրոսը 6 հատ 5 կոպէկանոց հաց գնեց. բայց նրա մօտ միայն 2 հատ հինգ կոպէկանոց և 4 հատ երկու կոպէկանոց դրամներ կային: Քա՞նի կոպէկ պարտ մնաց նա:

93. Սև մահուդի արշինն արժէ 4 ռուբլի, իսկ կապոյտի արշինը՝ 5 ռուբլի: Գնուած է 18 արշին մահուդ 80 ռուբլու: Քա՞նի արշին սև և քա՞նի արշին կապոյտ մահուդ է գնուած:

94. Երկու առևտրականներ հաւասար մեծութեան 7-ը տակառ նաւթին միասին 84 ռուբլի վճարեցին: Ո՞րքան վճարեց նրանցից իւրաքանչիւրը, եթէ մէկը 4 տակառ ընդունեց, իսկ միւսը՝ մնացածները:

95. Որդին հօրից 3 հատ 25 կոպէկանոց ստացաւ և այս փողերով կէս դիւժին մատիտ գնեց՝ հատը 5 կոպէկով և մի քանի դաստա թուղթ՝ դաստան 15 կոպէկով: Քա՞նի դաստա թուղթ գնեց նա:

96. Մրգավաճառը առաջին օրը ծախեց իր մօտ գտնուած ձմերուկների քառորդ մասը, իսկ միւս օրը՝ մի վեցերորդ մասը: Քա՞նի ձմերուկ ծախեց նա երկրորդ օրը, եթէ նա առաջին օրը 24 ձմերուկ ծախեց:

97. Աշակերտը 8 հատ 5 կոպէկանոց ունէր: Այս փողերի մի մասով նա տետրակներ գնեց՝ հատը 6 կոպէկով: Ո՞րքան տետրակ գնեց աշակերտը, եթէ գնելուց յետոյ նրա մօտ 16 կոպէկ մնաց:

98. Ի՞նչն է աւելի թանկ և ո՞րքան թանկ. 5 գրւանքայ շաքարը գրւանքան 17 կոպէկով թէ՞ 2 գրւանքայ սուրճը՝ գրւանքան 45 կոպէկով:

99. Երեսունըհինգ զինւորի համար 10 օրւայ պաշար պաքսիմաթ էին պատրաստել: Այս պաշարը քա՞նի օր կը բաւականացնէր 25 զինւորի:

100. Ներկ պատրաստելու համար 2 մաս սնդիկի հետ խառնում են 15 մաս ծծումբ: Ո՞րքան սնդիկ և ո՞րքան ծծումբ պէտք է վեր առնել 85 գրւանքայ ներկ պատրաստելու համար:

101. Ապակեգործն ապակիներին «զամազկա» քսելու համար «զամազկայի» գրւանքան 9 կոպէկ հաշւեց: Նա մէկ ռուբլիանոց ստացաւ և 19 կոպէկ յետ տւեց: Քա՞նի գրւանքայ «զամազկա» բանեցրեց նա:

102. Գնել էին 2 կտոր քաթան 37-ական արշինանոց: Քաթանից կարեցին մի դիւժին շապիկ և մի քանի բարձի երես: Քա՞նի բարձի երես կարեցին, եթէ իւրաքանչիւր շապկին 5 արշին գնաց, իսկ իւրաքանչիւր բարձի երեսին՝ 2 արշին:

103. Մի խումբ բանւորներ 48 ռուբլի վաստակեցին, միւս խումբը՝ 3 անգամ քիչ, իսկ երրորդը՝ 17 ռուբլի երկրորդից աւելի: Քա՞նի ռուբլի վաստակեցին բոլոր երեք խմբերը:

104. Քաղաքից մինչև գիւղ 69 վերստ է: Գիւղացին արդէն անցել է 51 վերստ: Մի ժամում քա՞նի վերստ պէտք է նա անցնի՝ 3 ժամ յետոյ տուն հասնելու համար:

105. Գիւղացին գիւղից քաղաք հասաւ երկաթուղիով 3 ժամում, մի ժամում 28 վերստ անցնելով: Վերադարձին նա 28 վերստ ոտով անցաւ, իսկ մնացած ճանապարհը սայլով, ժամը 8 վերստ անցնելով: Քա՞նի ժամ նա սայլով գնաց:

106. *Մէկը առաջին օրը ոտով 25 վերստ անցաւ, իսկ երկրորդ օրը՝ 8 վերստ պակաս։ Ի՞նչ հեռաւորութիւն ունէր նրա ամբողջ ճանապարհը, եթէ ճանապարհի մի երրորդական մասը նա դեռ պէտք է անցնէր։*

107. *Ճանապարհորդը պէտք է 98 վերստ տարածութիւն անցնէր. նա 49 վերստն անցաւ։ Մի ժամում քանի վերստ պէտք է անցնի՝ մնացած տարածութիւնը 7 ժամւայ մէջ անցնելու համար։*

108. *Աւազանը, որ 72 վեդրօ ջուր է տանում, 2 ծորակ ունի. մի ծորակով աւազանը լցւում է 12 րոպէում, իսկ միւսով՝ 6 րոպէում։ Ո՞րքան ժամանակւայ մէջ կը լցւի աւազանը, եթէ երկու ծորակն էլ միաժամանակ բանալու լինենք։*

II. ԶՈՒՏ ՀԱՐԻՒՐԱԿՆԵՐ

1—1000 ԹԻԱԳՐՈՒՄ

Ա. ԻՐԱՇՐՋԱՆ

Ընտանեկան կեանք

Մենք վճարում ենք մանէթներով ու կոպէկներով. 1 մնթ=100 կ։ Խոշոր դրամների տեսակները, երեք, հինգ և տասը մանէթանոց։ Դիտել ու նկարագրել։

Հիմնական խնդիր

109. *Գրիգորենք բնակարանի վարձ վճարում են տարին 300 մանէթ, ծառայի վարձ՝ 200 մանէթ, իսկ վառելիքի և լուսաւորութեան՝ 100 մանէթ։ Այսքանը քանի մանէթ է անում։*

Բ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Նախավարժութիւններ

34. *Համարիր, 1 մնթ, 2 մնթ... 10 մ. 10 մնթ, 9 մնթ... 1 մնթ.*

35. *1 մնթը հարիւր կոպէկ է, 2 մնթը երկուհարիւր կոպէկ է և այլն, մինչև 10 մնթը տասը հարիւր կամ հազար կոպէկ է։ Նոյնը՝ դէպի վար։ (Նոր թւական անունները գրել)։*

36. *Հարիւր կոպէկը 1 մնթ է, երկու հարիւր կոպէկը 2 մնթ է և այլն։ Նաև դէպի վար։*

37. *Համարիր առանց անուն տալու. հարիւր, երկու հարիւր... տասը հարիւր։ Տասը հարիւրին ասում են հազար։*

38. *Մի անգամ էլ նոյնը կրկնիր, տասը հարիւրի փոխարէն հազար ասելով։ Նոյնը նաև դէպի վար։*

39. Քանի տասնեակ ունի 1 մնթը, 2, 3...մնթը։

40. Քանի կոպէկ է՝ 5, 8, 3, 9, 6, 2, 4, 7, 10 մնթը։

41. Քանի մանէթ է՝ 500, 800, 200, 900, 600, 300 700 կոպէկը։

42. Գրի՛ր նոր թւերը. մի հարիւր=100, երկու հարիւր=200 և այլն։ Հարիւրաւորները միաւորի ձախ կողմը երրորդ տեղն են բռնում։

43. Կարդա՛ 300, 600; 900, 100, 400, 700, 1000, 200, 500, 800։

44. Գրի՛ր հինգ հարիւր, հազար, չորս հարիւր, ինը հարիւր, երեք հարիւր, ութը հարիւր, երկու հարիւր, եօթը հարիւր, հարիւր, վեց հարիւր։ Կարդալ այդ գրւած թւերը։

45. Այս հարիւրաւորը որ հարիւրաւորից առաջ է գալիս, յետոյ է գալիս կամ թէ չէ՝ որ հարիւրաւորների միջև է գտնւում։

46. Հարիւրաւորների համեմատութիւնը միմեանց հետ։ Պատասխանները աւելի պակաս կամ աւելի մեծ, աւելի փոքր հարցումների։ Քա՞նի հարիւրով աւելի, պակաս հարցումների։

Բ. ԱՌԱՋԻՆ ՀԱՇԻԵՏԵՍԱԿ

Չորս հիմնական գործողութիւնները զուտ հարիւրեակներով

1. ԳՈՒՄԱՐԵԼ, ՀԱՆԵԼ

47. Գումարումից առաջացած թւագրեր։ Քանի կոպէկ է՝ ա) 1 մնթ+1 մնթ, 2 մնթ+1 մնթ և այլն։ բ) 1 մնթ+2 մնթ, 2 մնթ+2 մնթ և այլն։ գ) 1 մնթ+3 մնթ, 2 մնթ+3 մնթ և այլն։ Նոյնպէս՝ 4, 5... 9 մնթի համար։

48. Գումարումից առաջացած շարքեր. ա) 100+100, 200+100 և այլն։ բ) 100+200, 200+200 և այլն։ գ) 100+300։ Նոյնպէս՝ 400, 500...900։

49.	50.	51.	52.
400+100	500+300	600+100	100+200+400
900+100	100+300	400+200	200+300+400
300+100	400+300	700+300	600+100+300
800+100	600+400	400+400	700+200+100
200+100	300+400	500+500	500+200+200
700+200	100+500	200+500	600+200+200

53. Հանումից առաջացած թւակարգեր։ Քանի կոպէկ է. ա) 10 մնթ—1 մնթ, 9 մնթ—1 մնթ և այլն։ բ) 10 մնթ—2 մնթ, 9 մնթ—2 մնթ և այլն։ գ) 10 մնթ—3 մնթ, 9 մնթ—3 մնթ և այլն։ Նոյնպէս 4, 5... 9 մնթի համար թւակարգեր կազմել։

54. Հանումից առաջացած թւակարգեր։ ա) 1000—100, 200—100 և այլն։ բ) 1000—200, 900—200 և այլն։ գ) 1000—200, 900—200 և այլն։ Նոյնը 400, 500... 900 թւերի համար կազմել։

55.	56.	57.	58.
200—100	600—300	900—600	900—300—500
800—100	700—300	900—900	600—200—800
100—100	500—300	1000—700	800—200—600
1000—100	900—400	800—800	800—400—300
900—200	600—400	1000—900	800—400—300
600—200	1000—400	1000—500	700—300—300

59.	60.	61.
300+200—100	600+400+700	800= 600+
600+100—400	300+500—400	900= 400+
800+200—900	1000—500—300	1000= 900+
400+300—200	200+500—300	300= 500—
800—600+800	1000—800+300	800= 900—
700—300+400	600—200+800	900=1000=
1000—700+400	1000—500+500	500= 900—

62. Տակտով հաշիւ։ ա) 300+700—200—400+500—500—500—300=? բ) 1000—300—300—300+200+400—600+800—200—300+500=? և այլն։

63 Համեմատութիւններ: Առաջին թւակարգ. 100+200=300, 200+100=300, 100+300=400, 300+100=400 և այլն: 200+300=500, 300+200=500 և այլն: Երկրորդ թւակարգ' 1000—100=900, 1000—700=300 և այլն: 1000—200=800, 1000—800=200 և այլն և այլն:

64. Համեմատութիւններ: Առաջին խմբակ (կապակցութեամբ № 49—52 շարքերի հետ.) 400+100=500, 40+10=50, 4+1=5 և այլն և այլն: Երկրորդ խմբակ կապակցութեամբ № 55—61.) 200—100=100, 20—10=10, 2—1=1 և այլն, և այլն:

65. Խնդիրներ կազմել: Առաջին խմբակ. խնդիրներ, որոնց լուծումից 400 է դուրս գալիս: 100+300, 200+200 300+100: Նոյն կարգով 500-ի, 700-ի, 900 ի, 600 ի, 800-ի 1000-ի համար: Երկրորդ խմբակ. խնդիրներ, որոնց լուծումից 100 մնացորդ ենք ստանում. 200—100, 300—200, 400—300 և այլն: Նոյնպէս' 200-ի, 400-ի, 600-ի, 300-ի, 500 ի, 700-համար:

66. Հետևողութեամբ կազմւած խնդիրներ: Կազմիր հինգ խնդիր, որոնք նման են հետևեալներին. 900—700+500—400=300: Բայց արդիւնքը միշտ 500 լինի:

Գործնական խնդիրներ

110. Պետրոսի հայրը տարին 1000 մանէթ ռոճիկ է ստանում: Նա բնակարանի վճարում է 200 մանէթ. որքան փող է մնում ապրուստի մնացած բաների համար:

111. Մի ընտանիք 900 մանէթ ծախսել էր 3 ամսում: Մէկ ամսում որչափ է ծախսել,

112. Մի ընտանիք մինչև նոր եկամուտ ստանալը 5 ամսւայ համար ունի 600 մանէթ: Ամիսը որքան պէտք է ծախսէ, որ պարտքի տակ չընկնի:

113. Սուրէնն ունի 5 մանէթ, Սաթենիկը' 3 մանէթ պակաս: Երկուսը միասին քանի կոպէկ ունին:

114. Գրիգորը 6 մնթ ունէր, 3 մնթ էլ ստացաւ: Նրա ունեցածը քանի կոպէկ պակաս եղաւ 1000 կոպէկից:

115. Երբ Մարգարիտը իր ունեցած փողի վրայ 2 մնթ դրեց, նրա ունեցած փողը 1000-կոպէկից 100 կոպէկ պակաս եղաւ. որքան փող ունէր նա սկիզբը:

116. Եթէ մէկը 4 մանէթ ծախսել է, և մօտը 5 մանէթ պահել է, ուրեմն նա 1000-ից քանի կոպէկ պակաս է ունեցել:

117. 800 կոպէկը ինչ տեսակի փողերի հետ կարելի է փոխել:

118. Երկու թիւ միասին 200-ով պակաս են 100-ից. առաջին թիւը 300 է, որն է միւսը:

119. Ո՞ր թւից պէտք է 400 հանել, որ 500-ից 300-ով պակաս թիւ ստանանք:

II. ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ, ՉԱՓԵԼ, ԲԱԺԱՆԵԼ:

67. Բազմապատկումից առաջացած թւագրեր. 1 մնթ×1, 1 մնթ×2 և այլն: 2 մնթ×1, 2 մնթ ×2 և այլն:

68. Բազմապատկումից առաջացած թւակարգեր. ա) 100×1, 100×2 և այլն: բ) 200×1, 200×2 և այլն, և այլն:

69.	70.	71.	72.
100× 4	200×1	500×2	900=300×X
100× 9	200×3	700×1	500=500×X
100× 5	200×2	900×1	800=400×X
100×10	200×4	1000×1	1000=500×X
100× 7	300×1	300×3	600=300×X
100× 1	300×2	300×2	700=700×X
100× 8	400×1	300×1	1000=200×X

73. Զափելուց առաջացած թւակարգեր. 1 արշ:1 արշ=1, 2 արշ:1 արշ=2 և այլն: 2 արշ:2արշ=1, 4 արշ:2 արշ=2 և այլն:

74. Զափելուց առաջացած թւակարգեր. ա) 100:100=1, 200:100=2 և այլն: բ) 200:200=1, 400:200=2 և այլն.

75.	76.	77.	78.
400 : 100	900 : 300	300 : 200	3= 900 : X
300 : 100	300 : 300	700 : 200	1= 800 : X
900 : 100	800 : 400	900 : 100	2=1000 : X
300 : 100	1000 : 500	400 : 300	5= 500 : X
1000 : 200	500 : 500	1000 : 300	1= 700 : X
200 : 200	700 : 700	700 : 400	4= 400 : X
800 : 200	800 : 800	1000 : 600	5=1000 : X

79. Տակտով հաշիւ. ա) 300×2:200+7×10××8:400=? բ) 1000:200×2×9:30+7×10×9:300++9×5=? և այլն:

80. Բաժանումից առաջացած թւակարգեր. 1 հարիւրնոցը:1=1 հարիւրի, 2 հարիւրնոցը:1=2 հարիւրի, 2 հարիւրնոցը:2=1 հարիւրի, 4 հարիւրնոցը:2==2 հարիւրի:

81. Բաժանումից առաջացած թւակարգեր. 100:1=100, 200:1=200 և այլն,

82.	83.	84.	85.
100 : 1	300 : 3	100= 300 : X	100×6 : 3
400 : 1	900 : 3	400= 800 : X	300×3 : 9
1000 : 1	800 : 4	700= 700 : X	500×2 : 5
300 : 1	1000 : 5	500= 100 : X	700 : 7×6
600 : 2	500 : 5	800= 800 : X	800 : 4×3
1000 : 2	600 : 6	200=1000 : X	900 : 3×2
800 : 2	800 : 8	200= 800 : X	1000 : 5×4

86. Տակտով հաշիւ. ա) 800:2+500:3+400::7×10=? բ) 1000:5×4:2+200:3+60:4−100×5=? և այլն:

87.	88.	89.
100×10 : 500	100×4+300	200×5 - 400
200× 4 : 400	200×4+100	300×3 - 600
300× 2 : 200	400×2+200	200×4 - 500
600 : 300×14	200×3+400	300×2 - 400
800 : 200×15	500+400×1	900 - 100×7
100×8 : 4×5	300+100×2	700—300×2
300×2 : 3×4	100+300×2	1000 - 200×4

90.	91.	92.
800 : 400+ 5	900 : 300— 3	1000—400×2
1000 : 200+ 7	1000 : 200— 2	600+200+9
800 : 200+ 8	800 : 200— 1	37+800 : 200
900 : 900+ 9	21— 600 :100	70 : 600 : 300
18+ 400 : 200	30— 800 :400	500 : 200×2
29+ 800 : 400	42— 900 :300	500+2 - 300
56+ 1000 : 200	59— 600 :200	1000 : 200+2

93. Բաժանելուց և բազմապատկելուց առաջացած թւակարգեր. ա) 200-ի, 400-ի, 600-ի, 800-ի 1000-ի 1/2: բ) 300-ի, 600 ի, 900-ի 1/3, գ) 400-ի, 800-ի 1/4, դ) 500-ի, 1000-ի և այլն 1/5: Ապա՝ որքան որ թւակարգը թոյլ է տալիս. 2/2, 3/2, 4/2, 5/2 և այլն: 2/3, 3/3, 4/3, և այլն:

94.	95.	96.
400-ի 1/2	600 ի 2/3+300	700 ի 4/7+800 ի 3/4
900-ի 1/3	800 ի 5/4—300	600 ի 2/3+ 800 ի 3/8
800-ի 1/4	600+1000 ի 2/5	400 ի 5/4+ 300-ի 4/3
1000 ի 1/5	900— 900 ի 4/9	600 ի 5/3+1000 ի 1/2
600 ի 2/3	1000-ի 3/5+400	400×2 - 1000 ի 3/5
800-ի 3/4	600-ի 3/2—800	900 : 3 - 200 ի 3/2
1000-ի 4/5	1000—1000 ի 4/5	500-ի 4/5+800:4
1000-ի 3/5	800— 800-ի 3/4	400-ի 5/2 : 500

600-ի $^{4}/_{3}$ 500 ի $^{4}/_{5}$+200 900-ի $^{2}/_{3}$: 300
400 ի $^{5}/_{2}$ 800-ի $^{1}/_{2}$+300 600-ի $^{5}/_{6}$+200—600

96. Համեմատութիւններ։ ա) 100×1, 1×100 և այլն։ 200×1, 1×200 և այլն բ) 100:100, 100:1, 200:100, 200:2 և այլն։ 200:200, 200:1 և այլն։

97. Կապակցութիւններ։ ա) 100:100=1, որովհետև 1×100=100, 200:100=2, որովհետև 2×100=200 և այլն։ բ) 100:1=100, որովհետև 100×1=100 և այլն։

98. Հետևանքներ։ ա) 100×1=100 և այլն։ բ) 1××100=100 և այլն։ գ) 100=100×1 և այլն։ դ) 100==1×100 և այլն։ ե) 100:100=1 և այլն։ զ) 100:1==100 և այլն։ է) 1=100:100 և այլն։ ը) 100=100:1 և այլն։

99. Համադրութիւններ։ ա) 100×1, 10×1, 1×1, և այլն։ բ) 1×100, 1×10, 1×1 և այլն։ գ) 100::100, 10:10, 1:1։ դ) 100:1, 10:1, 1:1 և այլն, և այլն։

Գ. ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Առաջին խմբակ

120. Դասարանի լայնութիւնը նրա երկարութեան $^{3}/_{4}$-ի չափ է. դասարանը 8 արշին երկարութիւն ունի։ Ո՞րքան է նրա լայնութիւնը։

121. Մի աղբիւր մի ժամում 600 վեդրօ ջուր էր տալիս, միւսը՝ նրա միայն $^{1}/_{3}$ մասը։ Ո՞րքան էին տալիս երկուսը միասին իւրաքանչիւր ժամում։

122. Տիկին Նազարեանը օրական 5 գրւանքայ կարտոֆիլ էր առնում և 15 կ. վճարում. նոյն կարտոֆիլը փթով ծախւում էր 80 կոպէկով. Ո՞րքան խնայողութիւն արած կը լինէր նա 1 փթի մէջ, եթէ փթով առնէր։

123. Մի ընտանիք իւրաքանչիւր ճաշի համար բանեցնում էր 3 գրւանքայ կարտոֆիլ. որքան գրւանքայ կարտոֆիլ պէտք է առնէր այդ ընտանիքը 200 ճաշի համար։ Եւ որքան կարժենայ մի ճաշի կարտոֆիլը, եթէ փութը 1 ր. 20 կ. են առել։

124. Աշխէնը հաւերին կուտ էր տալիս օրական 3 գրւանքայ գարի. որքան շաբաթ և օր կը բաւականացնէր 3 փութը։ Այն ժամանակ 1 փութ գարին արժէր 1 ր 20 կ. որքան կուտի փող նա տւած կը լինէր 1 շաբաթում։

125. Տանտիկինը 1 փութ խնձոր առաւ լաւ տեսակից, գրւանքան 10 կ, 2 փ. միջակ տեսակից, գրւանքան 8 կ, և 1 փ. հասարակ տեսակից, գրւանքան 6 կ։ Ո՞րքան փող տւեց նա։

126. Բ իր տան առաջին յարկի համար ստացաւ 400 մնթ. երկրորդ յարկի համար 100 մնթ պակաս, երրորդ յարկի համար 200 մնթ պակաս։ Ո՞րքան ստացաւ բոլորից։

127. Տան հիմքը փորելիս՝ օրական 70 սայլ հող ուրիշ տեղ կրեցին։ Ո՞րքան կրեցին ամբողջ շաբաթում։ Հետևեալ շաբաթը 600 սայլ աղիւս կրեցին։ Ո՞րքան աղիւս օրական։

128. Լուցկու փաթեթը (պակէտը=10 տուփ) արժէ 10 կոպ. 100 փաթեթ գնողը վճարում է 8 մանէթ։ Ո՞րքան օգուտ կստացւի 100 փաթեթով գնելիս։

Երկրորդ խմբակ

128. Ո՞ր թիւն է 1000-ից 800-ի $^{3}/_{4}$-ով պակաս։

130. Քանի մանէթ է միասին 100 հատ 50 կոպէկանոցը, 100 հատ քսան կոպէկանոցը, 100 հատ հինգ կոպէկանոցը, 100 հատ երեք կոպէկանոցը, 100 հատ երկու կոպէկանոցը, 100 հատ մէկ կոպէկանոցը։

131. Մինասեանն ունի 100 մանէթի հինգ մանէթանոց 100 մանէթի 10 մանէթանոց։ Քանի դրամ ունի նա։

132. Ջուրաբեանն ստանում է 1000 մանէթ ռոճիկ. բնակարանի վճարում է 200 մնթ, ուտելիքի 500 մնթ և մնացորդի $^2/_3$-ը հագուստեղէնի։ Ուրիշ բաների համար որքան փող է մնում։

Աւելի բարդ կազմով խնդիրներ

133. Վաճառականը 500 ռուբ. ապրանք գնեց և ծախսելով 100 ռուբ. օգուտ ստացաւ. ստացած փողերի մի երրորդական մասը պարտքի տուեց։ Ո՞րքան փող նրա մօտ մնաց։

134. Անտառում 300 կաղնի ծառ կայ, լօրիի՝ 100-ով աւելի. իսկ բարտի՝ լօրիներից 2 անգամ աւելի։ Անտառում քանի հատ բարտի կայ։

135. Կենդանավաճառը ձիերին 300 ռուբլի վճարեց, ոչխարներին՝ 200 ռուբլի պակաս, իսկ եզներին՝ ոչխարներին տուածից 400 ռուբլի աւելի. բոլոր կենդանիները ծախելով նա 100 ռուբլի օգուտ ստացաւ։ Բոլորը քանիսով ծախեց։

136. Մի մարգագետնից գիւղացիք 200 բարդ խոտ հնձեցին, միւսից՝ երեք անգամ աւելի, իսկ երրորդից առաջինի չափ. բոլոր խոտի $^1/_5$ մասը նրանք ծախեցին։ Քանի բարդ խոտ նրանց մնաց։

137. Մի անտառում 200 ծառ կտրեցին, միւսում 800 և նրանցով տուն շինեցին ու 2 նոյն մեծութեամբ ամբար։ Ո՞րքան ծառ գնաց ամեն մի ամբարի, եթէ մի տանը 400 հատ գնաց։

138 Հինգ հօտում 200 ոչխար կար. բոլորի կէսը ծախեցին, իսկ մնացածների $^1/_5$ մասը մորթեցին։ Ո՞րքան ոչխար մնաց։

139. 4 տանտէր միասին 1000 հատ աղիւս գնեցին. նրանցից մէկը 200 հատ վերցրեց, միւսը՝ երեք անգամ աւելի, իսկ մնացածները՝ իրար հաւասար չափով։ Ամեն մէկին քանի աղիւս ընկաւ։

140. Վաճառականը մի ամբարում 900 սոմար (չափ) ցորեն ունէր, միւսում՝ 500 սոմար պակաս, իսկ երրորդում երկու անգամ աւելի երկրորդից։ Ո՞ր ամբարում աւելի ցորեն կար, առաջինում թէ երրորդում և որքան աւելի։

141. Գործարանում բանում էին 400 տղամարդ և նոյնչափ՝ կանայք, իսկ երեխաները բոլոր հասակաւորներից 4 անգամ քիչ էին։ Քանի մարդ էր բանում գործարանում։

142. Նաւթի գործարանում որոշ ժամանակամիջոցում 500 տակառ նաւթ պատրաստեցին, իսկ միւս ժամանակամիջոցում՝ 400 տակառ. այն բոլորից 300 տակառ ծախեցին մի վաճառականի, իսկ բոլոր մնացածը՝ երեք վաճառականների՝ իւրաքանչիւրին հաւասար չափով։ Ամեն մէկին որքան տակառ է ծախուած։

143. Ճամփորդը ձիով 200 վերստ անցաւ, երկաթուղով՝ 4 անգամ աւելի, իսկ շոգենաւով՝ 5 անգամ պակաս՝ քան ձիով ու երկաթուղով միասին։ Քանի վերստ անցաւ նա շոգենաւով։

III. ՀԱՐԻՒՐԱԿՆԵՐ ԵՒ ՏԱՍՆԵԱԿՆԵՐ

Ա. ԻՐԱՇՐՋԱՆ

Դպրոցական կեանք

Մանէթ ու կոպէկ։ Գրում են. 4,60 մնթ և կարդում են. 4 մանէթ 60 կոպէկ։ Մտքումդ պահիր. միայն մեծագոյն տեսակի անունն են գրում։ Ինչ որ ստորակետից առաջ է գտնւում, մեծագոյն տեսակին է պատկանում,

ինչ որ ստորակէտից յետոյ, փոքրագոյն տեսակին։ Անուն-ներից յետոյ աւելորդ են համարում որեւէ կէտ դնել։ Ու-րեմն ինչպէս պէտք է գրել. 3 մանէթ 40 կոպէկ, 4 մա-նէթ 50 կոպէկ։ Ի՞նչպէս պէտք է կարդալ 6,20 մնթ։

Հիմնական խնդիրներ

144. Տիգրանն իր հօրից ստացաւ դպրոցական պի-տոյքի համար 4 մնթ 60 կ և մօրից՝ 2 մնթ 30 կ։ Ընդա-մէնը նա քանի կոպէկ ստացաւ։

145. Չորրորդ դասարանը նկարչութեան բոլոր տետրակ-ների համար վճարեց 7 մնթ 60 կ, իսկ առաջին դասարանը՝ 4 մնթ 20 կ պակաս։ Առաջին դասարանը որքան վճարեց։

Բ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Նախավարժութիւններ

101. Թւակարգ. 1 տասը կոպէկանոց=10 կ, 2 տկպ=20... 10 տկպ կամ 1 մնթ=100 կ։ Համարել 10 կ, 20 կ... 100 կ, 90 կ... 10 կ։

102. Թւակարգ. 1 տ (տասնակ)=10 մ (միու-թեան), 2 տ=20 մ... 10 տ կամ 1 հ (հարիւրակ)=100 մ։

103. Թւակարգ. 1 մանէթ ու 1 տկպ հարիւր տասը կոպէկ է, 1 մանէթ ու 2 տկպ հարիւր քսան կոպէկ է և այլն, մինչև 1 մանէթ ու 10 տկպ երկու հարիւր կոպէկ է։ Համարել. հարիւր տասը կոպէկ, հարիւր քսան կոպէկ և այլն, մինչև երկու հարիւր կոպէկ։

104. Թւակարգ. 1 հ և 1 տ հաւասար է հարիւր տասը միաւորի, 1 հ և 2 տ՝ հարիւր քսան և այլն, մինչև 1 հ և 10 տ հաւասար է երկու հարիւր միաւորի։ Համա-րել. հարիւր տասը, հարիւր քսան և այլն, երկու հարիւր։

105. Գրել նոր թւերը. հարիւր տասը=110 և այլն. Տես, տասնաւորները աջից դէպի ձախ երկրորդ տեղն են բռնում, հարիւրաւորները՝ երրորդ տեղը։

106. Թւեր կարդալ. 120, 150, 180, 110, 140, 170, 200, 130, 160, 190։

107. Թւերի թելադրութիւն. հարիւր տասը, հարիւր վաթսուն, հարիւր քսան, հարիւր եօթանասուն, հարիւր երեսուն, հարիւր ութսուն, հարիւր քառասուն, հարիւր իննսուն, հարիւր յիսուն, երկու հարիւր։ Կարդալ գրածները։

108. Միւս տասնեակների խմբակները մշակել նոյն կարգով. 210 մինչև 300, 310 մինչև 400... 910 մինչև 1000։

109. Տասնեակներով համարել զանազան սկզբնական կէտերից և զանազան վերջակէտերի հասցնելով դէպի ա-ռաջ ու յետ (վեր ու վար), օր. 310-ից մինչև 420, 560-ից մինչև 720, 980-ից մինչև 870, 840-ից մինչև 680։

110. Գրել տասնեակների թւակարգը. 470 ից մինչև 540, 850-ից մինչև 920, 730-ից մինչև 950, 810-ից մին-չև 740։

111 Թւերի թելադրութիւն, բոլոր տասնեակների խըմ-բակներն ի նկատի ունենալով։ Գրածները կարդալ։

112. Ո՞ր տասնեակով թիւը 190-ից, 290-ից, 390-ից յետոյ է գալիս։ Որ տասնեակով թիւը 210-ից, 310-ից, 410-ից... 910-ից առաջ է գալիս։

113. Ո՞ր տասնեակով թիւը 100-ից, 900-ից, 300-ից, 1000-ից առաջ է գալիս։ Սերտողութիւն նախընթացի պէս։

114. Ո՞ր տասնեակով թւերը հետևեալ թւերից առաջ ու յետոյ են գալիս. 520, 480. 840, 960, 370, 250, 710, 130, 690 և այլն։

115. Ո՞ր տասնեակով թւերը գտնւում են 540-ի և 500-ի

միջև, 380-ի և 400-ի միջև, 980-ի և 910-ի միջև, 700-ի և 720-ի միջև, 650 ի և 470-ի միջև:

116. Ո՞ր տասնեակով թւերի միջև են գտնւում. 520, 360, 850, 910, 780, 490, 630, 240, 170, և այլն:

117. Թելադրութիւններ 111-ից մինչև 115. համարներին յարակից: Օրինակ՝ գրել այն տասնեակներով թւերը, որոնք 570-ից, 610-ից, 790-ից յետոյ են գալիս:

118. Համեմատութիւններ՝ ըստ աւելի և պակաս, աւելի մեծ, աւելի փոքր, ո՞րքան աւելի, ո՞րքան պակաս հարցումներին:

բ. Երկրորդ հաշւետեսակ

100+10=110 110—10=100

119. Քանի կոպէկ է 1 մնթ+10 կ, 1 մնթ+20 կ... 1 մնթ+90 կ: (Շարունակել, եթէ հարկ զգացւի).

120. Թւակարգեր. 110+10, 100+20... 100+90, 200+10, 200+20... 200+90, 300+10, 300+20 և այլն, և այլն:

221.	122.	123.	124.
100+60	200+10	110=100+	930=900+
100+90	500+70	150=100+	790=700+
100+50	600+30	170=100+	550=500+
100+80	700+80	190=100+	480=400+
101+40	900+90	180=100+	240=200+
100+70	800+50	140=100+	170=100+

125. Քանի մանէթ ու կոպէկ են. 200 կ+70 կ, 100 կ+40 կ, 400 կ+10 կ, 300 կ+80 կ, 900 կ+20 կ, 800 կ+50 կ, 700 կ+90 կ, 600 կ+30 կ, 500+60 կ: (Պատասխանները կարճ ձևով գրել!)

126. 1,20 մնթ=100 կ+; 64,0 մնթ=600 կ+; 2,60 մնթ=200 կ+; 7,80 մնթ=700 կ+; 3,10 մնթ=

=300 կ+; 8 30 մնթ=800 կ+; 4,50 մնթ=400 կ+: 9,70 մնթ=900 կ+; 5,90 մնթ=500 կ+

127. Քանի կոպէկ է. 1,10 մնթ—10 կ; 1,20 մնթ—20 կ,—1,90 մնթ—90 կ: (Շարունակել նայելով պահանջին):

128. Թւակարգեր. 110—10, 120—20... 190—90, 210—10, 220—20... 290—90, 310—10, 320—20 և այլն, և այլն:

229.	130.	131.	132.
130—30	100=110—	850+50	920=900+
390—90	300=370—	700+90	740=700+
550—50	400=430—	630—30	510=500+
680—80	500=560—	500+70	400=450—
710—10	700=720—	420—20	200=230—
970—70	900=980—	300+60	170=100+

133. Ո՞րքան է. 2,50 մնթ=50 կ; 3,40 մնթ—40 կ; 4,70 մնթ—70 կ; 5,60 մնթ—60 կ; 5,90 մնթ—90 կ; 7,70 մնթ—80 կ:

134. Դարձնել մանէթի ու կոպէկի. 470 կ=4,70 մնթ: Նոյնպէս 230 կ, 450 կ, 670 կ, 890 կ, 920 կ, 740 կ, 560 կ, 380 կ, 110 կ:

135. 5 մնթ=5,10 մնթ—; 9 մնթ=9,60 մնթ—; 3 մնթ=3,30 մնթ—; 7 մնթ=7,80 մնթ—; 2 մնթ==2,40 մնթ—; 6 մնթ=6,90 մնթ—; 1 մնթ=1,50 մ—

176. Հարիւրակների և տասնեակների դարձնել. 680=600+80: Նոյնպէս. 760, 920, 380, 110, 290, 450, 870, 630, 540:

գ. Երրորդ հաշւետեսակ

Հարիւրակների գումարումն ու հանումը

137. Քանի կոպէկ է 1,10 մնթ+1 մնթ; 1,20 մնթ++1 մնթ... 1,90 մնթ+1 մնթ: (Շարունակել, նայելով պահանջին):

138. *Թւակարգեր։ 110+100; 120+100... 190+100; 210+100, 220+100... 290+100 և այլն։ 110+100։ 120+200 և այլն, և այլն։*

139.	140.	141.	142.
110+100	150+200=	130+ 70	240=140+
240+100	190+300=	760+200	360=260+
420+100	140+400=	690+300	630=530+
680+100	180+500=	340+500	950=650+
730+100	170+700=	570+400	570=270+
860+100	120+800=	420+300	990=390+
510+100	110+400=	810+100	840=440+

143. *Ո՞րքան մանէթ ու կոպէկ են. 320 կ+200 կ, 440 կ+300 կ, 560 կ+400 կ, 680 կ+100 կ, 710 կ+200 կ, 230 կ+500 կ, 150 կ+700 կ, 870 կ+100 կ։ (Լուծել գրաւոր կարճ ձևով)։*

144. *Քանի կոպէկ է. 1,10 մնթ—1 մնթ; 1,20 մնթ—1 մնթ... 1,90 մնթ—1 մնթ։ (Շարունակել, եթէ հարկ զգացւի)։*

145. *Թւակարգեր. 110—100, 120—100... 190—100, 210—100, 220—100... 290—100 և այլն։ 210—200, 220—200... 290—200, 310—200, 320—200 և այլն։*

146.	147.	148.	149.
150—100	610—600	210=910—	720+200
480—100	160—100	420=820—	980—700
710—100	720—300	630=730—	360+400
240—100	270—200	140=640—	670+300
270—100	830—500	350=550—	530+300
830—100	380—100	560=960—	840—600
360—100	940—600	770=870—	110+800

150. *Ո՞րքան է. 1,90 մնթ—1 մնթ; 4,70 մնթ—2 մնթ; 7,50 մնթ—3 մնթ; 9,30 մնթ—4 մնթ; 7,10 մնթ—5 մնթ; 3,80 մնթ—3 մնթ; 6,60 մնթ—4 մնթ; 8,40 մնթ—5 մնթ; 5,20 մնթ—2 մնթ։*

Դ. Չորրորդ հաշւետեսակ

100+110=100+100+10	*210—100=210—100—10*
=200+10=210	*=110—10=100*

151. *Ո՞րքան մանէթ է. 1 մնթ.+1,10 մնթ; 1 մնթ+1,20 մնթ... 1 մնթ+1,90 մնթ։ (Շարունակել, եթէ հարկ զգացւի)։*

152. *Թւակարգեր. 100+110, 100+120... 100+190, 100+210, 100+220... 100+290 և այլն։ 200+110, 200+120.. 200+190, 200+210, 200+200 և այլն։*

153.	154.	155.	156.
100+110	100+120	800+150	460=300+
100+160	200+180	600+230	570=200+
100+120	300+140	400+490	680=100+
100+170	400+110	200+470	510=400+
100+130	500+170	700+210	620=300+
100+180	600+130	500+380	730=200+

157. *Քանի մանէթ ու կոպէկ է. 200 կ+430 կ, 400 կ+520 կ, 600 կ+210 կ, 800 կ+140 կ, 100 կ+750 կ, 300 կ+360 կ, 500 կ+470 կ, 700 կ+190 կ։ (Գրաւոր լուծման կարճ ձև)։*

158. *Քանի մանէթ է. 2,10 մնթ—1,10 մնթ. 2,20 մնթ—1,20 մնթ... 2,90 մնթ—1,90 մնթ։ (Շարունակել, եթէ հարկ զգացւի)։*

159. *Թւակարգեր. 210—110, 220—120... 290—190, 310—110, 320—120... 390—190 և այլն։ 310—210, 320—220... 390—290, 410—210, 420—220 և այլն, և այլն։*

160.	161.	162.	163.
290—190	710—310	100=520—	300+590
330—160	380—230	300=640—	430—230
430—130	950—150	500=760—	600+220
870—170	540—440	400=730—	800+110

940 − 140	660 − 360	600 = 850 −	690 − 190
810 − 110	780 − 280	800 = 970 −	200 + 560

164. Որքան է. 2,80 մեթ—1,80 մեթ; 5,60 մեթ—2,60 մեթ; 8,40 մեթ—3,40 մեթ; 3,20 մնթ—2,20 մնթ; 6,90 մնթ—3,90 մնթ; 9,70 մնթ—4,70 մնթ; 4,50 մնթ—3,60 մեթ; 7,30 մեթ—4,30 մեթ։

165. Համադրութիւններ։ ա) 100+10 և 10+100, 200+10 և 10+200 և այլն։ 100+20 և 20+100, 200+20 և 20+200 և այլն, և այլն։ բ) 110−10 և 110−100, 210−10 և 210−200 և այլն։ 120−20 և 120−100, 220−20 և 220−200 և այլն, և այլն։

166. Համադրութիւններ։ ա) 110+100 և 100+110 և այլն։ 120+100 և 100+120 և այլն։ 110+200 և 200+110 և այլն։ բ) 210−100 և 210−110, 310−100 և 310−210 և այլն, և այլն։

167. Համեմատութիւններ։ ա) 100+10 և 110−10, 100+20 և 120−20 և այլն։ բ) 10+100 և 110−100 և այլն, և այլն։

168. Համեմատութիւններ։ ա) 110+100 և 210−100, 120+100 և 220−100 և այլն։ բ) 100+110 և 110−100 և այլն, և այլն։

169. Խնդիրներ կազմել։ Խնդիրներ, որոնք գումարումից միշտ 360 են տալիս. 100+260, 200+160, 300+60, 260+100, 160+200, 60+300։ Նոյնպէս կազմել 480-ի, 540-ի, 670-ի, 750-ի համար։

170. Խնդիրներ կազմել։ Խնդիրներ, որոնք հանումից միշտ 450 են տալիս. 550—100, 650—200, 750—300, 850—400, 950—500։ Նոյնպէս 300-ի, 360-ի, 540-ի, 270-ի, 930-ի համար։

ե. գործադրութիւն

171.	172.	173.
500+400+60	540+300−600	300+480−600
800−390+90	470+500−300	700−400+370
770−500−70	650−400+500	960−660+350
400×2+20	260+200×2	800+120−400
300×3+80	190+200×2	600−200+510
900+40−500	700−600+530	430+400−530
800 : 2+10	910+900 : 3	560+200−660
900 : 3+60	570−800 : 4	820−620+790

174.	175.	176.
800+75-ի $\frac{4}{5}$	1000-ի $\frac{4}{5}$+4+15	300+280=400+
770−98-ի $\frac{5}{7}$	5×12+900-ի $\frac{2}{3}$	200+470=870−
60 ի $\frac{5}{3}$+670	500+70−84-ի $\frac{5}{6}$	760−100=300+
800 ի $\frac{5}{4}$−200	300+45-ի $\frac{4}{3}$−160	840−300=940−
460+75-ի $\frac{4}{3}$	690−5×13+270	560+200=300+
840−900 ի $\frac{2}{3}$	470+200−14×5	190+300=990−
Կրկնութիւն XI Ա-ում տւած նիւթերի։ Մարդուսուրիշ շատ բաներ էլ հարկաւոր են հագուստեղէնի և բընակարանի համար. կօշիկներ, տնային, սենեակի և խոհանոցի գործիքներ, բնակարանի կահ-կարասիք և այլն։

Հիմնական խնդիրներ

464։ Լուսիկն իր նոր զգեստի համար 8 արշ կտոր առացաւ։ Ո՞րքան էր սրա գինը, եթէ արշինին 1 ր 15 կ վճարւեց։

465. Ս 3 խորանարդ սաժէն (բացատրութիւն!) վառելափայտի վճարեց 91,50 մնթ։ Միւս անգամ նա միայն 2 սաժէն գնեց։ Ո՞րքան վճարեց նա այս անգամ նոյն գնով։

Բ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Բազմապատկել

168×2	3×168	27×30	30×27	27×36
336	3	810	60	81
	18		210	162
	24		810	972
	504			

655. 84, 123, 148. 242, 286, 314, 359, 275, 467, 498×2
656. 72, 93, 112, 121, 173, 197, 218, 269, 295, 326×3
657. 62, 84, 96, 107, 119, 135, 158, 193, 216, 247×3

658. 41, 52, 83, 94։ 105, 126, 247, 168, 179, 195×4
659. 31, 49, 62, 78, 93, 107, 124, 136, 245, 159×6
660. 7×23, 36, 49, 62, 75, 98, 111, 124, 137, 142
661. 8×31, 44, 57, 63, 76, 89, 102, 105, 118, 124
662. 9×21, 36, 42, 57, 63, 78, 84, 99, 105, 108
663. 12×20, 40, 60, 80, 10, 30, 50, 70, 40, 60
664. 20×11, 13, 15, 17, 19, 22, 24, 26, 28, 31
665. 13×19, 28, 37, 51, 51, 62, 73, 54, 54, 64
666. 15×13, 17, 21, 25, 29, 34, 37, 42, 46, 58
667. 17×12, 16, 24, 28, 31, 35, 39, 43, 47, 54
668. 19×11, 15, 19, 23, 27, 32, 36, 44, 48, 52
669. 24×13, 15, 15, 22, 25, 28, 31, 34, 37, 41

670.	671.	672.	673.
64 կ×4	2,86 ռթ×3	37 փթ×20	50 փթ×17
86 կ+6	1,58 ռթ×6	98 փթ×10	90 փթ×11
45 կ×5	1,07 ռթ×9	23 փթ×50	40 փթ×24
74 կ×8	4,69 ռթ×2	16 փթ×60	80 փթ×12
53 կ×6	1,75 ռթ×5	19 փթ×50	30 փթ×27
92 կ×9	1,23 ռթ×8	14 փթ×70	70 փթ×14
89 կ×2	2,34 ռթ×4	11 փթ×90	90 փթ×48
78 կ×7	1,42 ռթ×7	12 փթ×80	80 փթ×15
65 կ×3	3,79 ռթ×2	32 փթ×30	30 փթ×83
57 կ×8	2,95 ռթ×3	47 փթ×20	20 փթ×36

բ. Բաժանել ու չափել

794:2=397	756:7=108	594:24=24 ռթ 18
6	7	48
19	5	114
18	0	96
14	56	18
14	56	

674. 684, 268, 426, 848, 666:2
675. 694, 234, 456, 678, 892:2
676. 794, 358, 536, 792, 914:2
677. 172, 152, 174, 164, 196:2
678. 369, 642, 561, 234, 612:3
679. 484, 856, 732, 356, 428:4
680. 555, 575, 685, 466, 545:5
681. 666, 684, 864, 576, 636:6
682. 777, 791, 966, 644, 756:7

683.645, 479, 753, 197, 817:2 684.779, 787, 898, 653, 976:7
685.694, 352, 776, 293, 614:3 686.896, 864, 736, 589, 678:8
687.847, 479, 594, 355, 822:4 688.675, 936, 817, 797, 586:9
689.559, 593, 786, 492, 546:5 690.720, 960, 470, 684, 873:30
691.668, 685, 874, 537, 646:6 692.480, 840, 950, 568, 796:60

693.594, 693, 891, 792, 473:11 654.456, 567, 678, 889, 345:16
695.768, 576, 876, 672, 900:12 696.357, 246, 579, 468, 791:17
697.598, 871, 689, 728, 442:13 698.543, 654, 765, 987, 873:18
699.784, 630, 588, 826, 406:14 700.753, 642, 975, 684, 597:19
701.585, 795, 960, 675, 855 83 702.987, 876, 765, 654, 543:24

703.864, 648, 540, 796, 952:36 704.600, 750, 435, 594, 873:200
705.624, 768, 912, 593, 876:48 706.900, 860, 720, 678, 534:300
707.728, 884, 624, 496, 964:52 708.480, 720, 560, 842, 609:120
709.825, 975, 525, 674, 729:75 710.750, 630, 910, 864, 507:250
711.913, 498, 747, 595, 873:83 712.760, 520, 880, 671, 408:380

գ. Գործադրութիւն

714. 4,68 ռբլ:6 կ	714. 38,88 ռբլ:12	715. 5,84 ռբլ:8
5,25 ռբլ:7 կ	20,72 ռբլ:14	6,51 ռբլ:7
6,24 ռբլ:8 կ	56,96 ռբլ:16	7,68 ռբլ:6
7,56 ռբլ:9 կ	56,76 ռբլ:18	8,80 ռբլ:5
8,75 ռբլ:5 կ	67,95 ռբլ:15	9.48 ռբլ:3

464. Մէկ արշ մետաքսէ ժապաւէնը 1,25 մնթ արժէ. ո՞րքան արժէ 17 արշինը։

466. Կէս դիւժին սուրճի գաւաթն արժէ 5,40 մնթ. ի՞նչ արժէ 1 գաւաթը։

467. Մէկ դժ ապուրի պնակին վճարեցին 7,80 մնթ. ո՞րքան արժէր 3 պնակը։

468. Տանտէրը լուսամուտի 7 նոր հաւասարաչափ

ապակիներին պէտք է 5,25 ռբլ վճարէ. ո՞րքան արժէ իւրաքանչիւր ապակին։

469. Չորս խորանարդ սաժէն վառելափայտը 99 մնթ արժէ. ո՞րքան արժէ 1 խորանարդ սաժէնը։

470. Տուփը 60 հատանոց տասը տուփ լուցկու համար, Ա. վճարեց 12 կ։ Քանի հատ լուցկի է գալիս 1 կոպէկին։

471. Ասեղիկը սեղանի ծածկոց էր գործում, որ պէտք է 36 շարք աստղեր ունենար՝ իւրաքանչիւրում 25 հատ։ Դեռ քանի աստղ էր պակաս, երբ 683 հատն արդէն պատրաստ էր։

472. Հեղինէն գուլպայ էր գործում իւրաքանչիւր ճաղին 18 հատ (ակն, петля). ո՞րքան հատ էր. եթէ Նա արդէն 12 անգամ շրջան էր արել։

473. Շուշանիկը նոյնքան ժամանակում միայն 10 շրջան գործեց, բայց ճաղին 24 հատ էր գցում։ Նրանց ո՞րն աւելի հատ գցեց։

474. Երկու շապկի համար $8\frac{3}{8}$ արշ. կտաւ պէտք եղաւ. ո՞րքան արշ կտաւ հարկաւոր կը լինի առնել 2 դժ շապկի համար։

475. Տիկին Բ. 4 ասեղին 5 կ վճարեց. ո՞րքան պէտք է նա վճարէր նոյն գնով 3 դժ առնելու համար։

476. Երեք զոյգ դանակ ու պատառաքաղի համար Գ. պէտք է 3,45 ռբլ վճարէր. այս հաշւով ո՞րքան արժէր դիւժինը։

477. Մէկ դիւժին գդալի գինը 9 մանէթ էր, իսկ հատով ծախքի գդալին 5 կ աւելի էր գալիս։ Ի՞նչ կարժենայ դիւժինն այս հաշւով։

478. Ապուրի պնակի ½ դժ 4,20 ռբլ արժէ, հատով ծախքը 75 կ։ Կէս դիւժինի համար այս հաշւով ո՞րքան աւելի պէտք է վճարւէր։

479. Ո՞րն է այն թիւը, որի մի երրորդ մասը 20-ից 1-ով պակաս է։

480. Ո՞րն է այն թիւը, որի քառորդը 20-ից 1-ով աւելի է։

481. Մի թւի $^2/_3$-ը 50-ից 10-ով աւելի է. այս ի՞նչ թիւ է։

482. Մի թւի $^3/_4$-ը 90-ից 15-ով պակաս է. այս ո՞ր թիւն է։

483. Մի թւի՝ հնգապատիկից 90-ի $^1/_6$ մասը հանելուց յետոյ մնում է 20. ո՞րն է այդ թիւը։

Աւելի բարդ կազմով խնդիրներ

484. Դպրոցում հաւասար քանակութեամբ տղաներ ու աղջիկներ կային. տղաներից իւրաքանչիւրը տարին 16 գրչածայր ստացաւ, իսկ աղջիկների իւրաքանչիւրը՝ 14. Նրանց բոլորի մէջ 750 հատ գրչածայր է բաժանւած։ Ո՞րքան երեխայ կայ դպրոցում։

485. Դպրոցում 145 աշակերտ կայ. Նրանց իւրաքանչիւրին մի տարում 6 ական մատիտ տւին։ Որքան արժեն բոլոր բաժանած մատիտները, եթէ նրանց 30 հատը 25 կոպէկ արժէ։

486. Բոլոր բանւորներին 961 ռուբ. բաժանեցին. Նրանցից 23 հոգի 27 ական ռուբլի ստացան, իսկ միւսները 20 ական ռուբլի։ Քանի բանւոր 20 ական ռուբլի ստացան։

487. Խմիչք ծախողը 14 շիշ թունդ քացախ ունէր՝ շիշը 24 կոպէկանոց. այս քացախի հետ խառնեց 6 շիշ ջուր։ Քանիսո՞վ պէտք է նա ծախէ խառնուրդի շիշը, որպէսզի բոլորից 44 կոպէկ օգուտ ստանայ։

488. Մի վաճառական միւսին 3 թօփ 65 արշիննոց մահուդ տւեց՝ արշինը 2 ռուբլով և նրանից ստացաւ 20 հաւասարաչափ թօփ քաթան և 50 ռուբ. փող։ Ի՞նչ գին դրին քաթանի մի թօփին։

489. Մի մեքենայ 40 րոպէում 520 պտուտակ է պատրաստում, միւսը 60 րոպէում՝ 720, իսկ երրորդը 70 րոպէում՝ 980 պտ։ Ո՞րքան պտուտակ կը պատրաստեն բոլոր 3 մեքենաները 24 րոպէում։

490. Վաճառականը 208 արշ. սև մահուդ գնեց՝ արշինը 2 ռուբլով, 148 արշ. կապոյտ՝ արշինը 3 ռուբլով և 20 արշին թաւիշ։ Այս ամենի համար նա 1000 ռուբ. վճարեց։ Ի՞նչ արժէր թաւշի արշինը։

491. Մի գիւղում 147 բնակիչ կայ, միւսում՝ 236. առաջին գիւղի իւրաքանչիւր բնակիչ հասարակական ամբարից 6 սոմառ ցորեն ստացաւ, իսկ երկրորդ գիւղի իւրաքանչիւր բնակիչ՝ 2 սոմառ պակաս։ Ո՞ր գիւղն աւելի ցորեն ստացաւ և ո՞րքան աւելի։

492. Զօրքի ձիերի համար 32 դէզ խոտ գնեցին, յետոյ դարձեալ 29 այդպիսի դէզ. առաջին անգամ 48 ռուբ. աւելի վճարեցին։ Ո՞րքան վճարեցին իւրաքանչիւր անգամ։

493. Քաղաք բերին մի քանի սայլ գարի՝ իւրաքանչիւրի վրայ 20 փութ բարձած և ցորեն 30 ական փութ բարձած. 640 փութ գարի ծախեցին և 540 փութ ցորեն։ Ընդամենը ո՞րքան փող ստացան գարուց և ցորենից, եթէ գարու սայլը 12 ռուբլով ծախեցին, իսկ ցորենինը՝ 24 ռուբլով։

494. Վաճառականը 80 փութ բրինձ ունէր՝ փութը 6 ռուբ. արժողութեամբ և 40 փութ էլ՝ լաւ տեսակի բրինձ. այդ բոլոր բրինձը խառնելով ու ծախելով փութը 7 ռուբլով, նա իւր բոլոր փողերը յետ ստացաւ։ Ի՞նչ արժէր լաւ տեսակի բրնձի փութը։

495. Երկու ատաղձագործներ հաւասար քանակութեամբ պահարաններ ու բազմոցներ շինեցին. պահարանների համար 26 ական ռուբլի վճարեցին, իսկ բազմոցների համար՝ 34 ական ռուբլի. նրանք ընդամենը 960 ռուբ. ստացան։ Ո՞րքան փող բաժին ընկաւ ամեն մի ատաղձագործի, եթէ նրանցից մէկը միայն պահարաններ էր շինել, միւսը՝ բազմոցներ։

496. Դպրոցում երեք բաժանմունք կայ. մեծերի բաժանմունքում 12 աշակերտ կայ, միջինում՝ 23, իսկ փոքրերի բաժանմունքում՝ 35. բոլորին հաւասար քանակութեամբ 910 թերթ թուղթ բաժանեցին։ Քանի թերթ թուղթ ստացաւ ամեն մի բաժանմունք։

գ. Տնական վարժութիւններ

1 մինչև 100 թւերը վերածել զոյգ արտադրիչների։ Բաժանման ձև։ Մերտ վարժութիւն։ Օրինակներ. 24:1=24; 24:2=12; 24:3=8; 24:4=6; 24:6=4; 24:8=3; 24:12=2; 24:24=1։

ՏԵՍԱԿՆԵՐԻ (ՏԻՊԵՐԻ) ՎԵՐԱԾՒԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Միութեան վերածում

497. Մրգաւաճառը 18 ձմերուկի համար 3 ր. 24 կ. վճարեց, իսկ 12 սեխի համար՝ 4 ր. 20 կ. Որքան պէտք է վճարէր մրգաւաճառը, եթէ 10 ձմերուկ և 5 սեխ առնէր։

498. Երկաթուղու գնացքը 15 ժամում 420 վերստ անցաւ։ Ի՞նչ տարածութիւն կանցնի նա 24 ժամում, եթէ իւրաքանչիւր ժամ 4 վերստ աւելի անցնի։

499. Երկու կին խանութում նոյն գնով չիթ գնեցին, առաջինը 27 արշ. և վճարեց 3 ր. 78 կ., երկրորդը 2 ր. 94 կ։ Քանի արշին չիթ գնեց երկրորդ կինը։

Եղանակ վերածման մի թւի, որ ցոյց է տալիս մի մեծութեան որքան անգամ աւելի լինելը միւսից

500. Վաճառականը 18 արկղ թէյի համար 248 ռուբ. վճարեց։ Որքան պէտք է նա վճարէր 72 արկղ նոյն տեսակ թէյի համար։

501. Խոտի 35 փութը կարելի է փոխել 65 փութ վարսակի ծղնոտի հետ։ Ո՞րքան է պէտք վարսակի ծղնոտ՝ 315 փութ խոտի հետ փոխելու համար։

502. Խոտը մարգագետնից մարագը կրելու համար 35 ձի 8 ժամ բանեցին։ Քանի ձի է հարկաւոր այս խոտը 5 ժամում կրելու համար։

503. 12 բանւոր 35 օրում շինութեան մէջ մի աշխատանք վերջացնելու համաձայնութիւն էին տալիս, բայց պահանջւում էր այս աշխատանքը 21 օրում վերջացնել։ Քանի բանւոր պէտք էր աւելացնել՝ նշանակւած ժամանակին վերջացնելու համար։

504. 18 հիւսներ մի ամառանոց 30 օրում շինեցին։ Քանի օրւայ մէջ 27 բանւոր կշինեն մի ուրիշը, որ 3 անգամ մեծ պէտք է լինի պռաջինից։

505. Գնւած է 171 ռուբլով 57 արշ. կապոյտ մահուդ և 14 արշ. թաւիշ։ Ո՞րքան պէտք եղաւ վճարել բոլոր ապրանքի համար, եթէ թաւշի արշինը 4 ռուբլով թանգ է մահուդի արշինից։

506. Գործարանային 9 բանւոր 24 օրում մեքենայով 864 արշ. կտոր գործեցին։ Քանի արշին նոյնպիսի կտոր կգործեն մեքենայով 2 բանւոր 8 օրում։

Առարկաների փոխանակութիւն

507. Մի վաճառական 6 թօփ 45 արշիննոց մահուդը փոխեց 24 թօփ 35 արշիննոց քաթանի հետ. մահուդի արշինի գինը 2 ռուբլի էր, իսկ քաթանինը՝ 1 ռուբլի։ Նրանցից ո՞րը պէտք է փող վրայ դնէր և ո՞րքան։

508. Գիւղացին 17 արշ. 14 կոպէկնոց չիթ գնելով վաճառականին փոխարէնը տւեց մի քանի փութ իւղ՝

ֆունտը 26 կոպէկով և 30 կ. փող։ Քանի ֆունտ իւղ ստացաւ վաճառականը։

509. Ալափտարը 32 չետւերտ հաճար՝ չետւերտը 7 ռուբ. արժողութեամբ՝ փոխեց 18 չետւերտ ցորենի հետ։ Ի՞նչ գնով պէտք է նա ծախէ ցորենի չետւերտը 46 ռուբ. օգուտ ստանալու համար։

Աւելորդ մասերը գեղչելու եղանակով լուծելի

510. Երեք հիւսն տուն շինելու համար 179 ռուբլի ստացան, նրանցից երկուսը նոյն չափով վարձ ստացան, իսկ երրորդը՝ նրանցից իւրաքանչիւրից 14 ռուբլի աւելի։ Ո՞րքան փող ստացաւ իւրաքանչիւրը։

511. Հաւաբնի մէջ 176 հաւ և ճուտ կար. երբ որ տէրը 18 հաւ և 42 ճուտ ծախեց, ճուտերը հաւերից 38-ով աւելի մնացին։ Ո՞րքան հաւ ու ճուտ կար։

512. Գնուած է 24 ֆունտ՝ թէյ և 9 փութ շաքար 126 ռուբլով։ Ո՞րքանով թանգ է շաքարի փութը թէյի փունտից, եթէ յայտնի է, որ բոլոր թէյի համար 18 ռուբլով աւելի է վճարուած՝ քան բոլոր շաքարի համար։

513. Երեք եղբայրներ միասին 7 ռուբ. 65 կոպ. ունէին. երբ որ մեծը միջնակին 45 կ. տւեց՝ փոքրին էլ՝ 75 կ., բոլորի փողերը հաւասարւեցին։ Ո՞րքան փող ունէր իւրաքանչիւր եղբայր։

514. Երկու թօփ մահուդի մէջ 144 արշին կար՝ արշինը 6 ռուբլի արժողութեամբ. մի կտորը միւսից 168 ռուբլով աժան էր։ Քանի արշին մահուդ կար իւրաքանչիւր թօփի մէջ։

515. Մրգավաճառը 42 նարինջ և 30 կիտրոն ծախեց 5 ռուբ. 58 կոպ. կիտրոնը 3 կոպէկով աւելի աժան ծախեց նարնջից։ Ի՞նչ գնով ծախեց նա նարնջի և կիտրոնի հատը։

516. Վաճառականը 3 արկղ 3 ռուբլիանոց թէյ գնեց 360 ռուբլով։ Երկրորդ արկղում 3 անգամ երրորդից աւելի թէյ կար, իսկ երրորդում՝ 4 անգամ աւելի՝ քան առաջինում։ Քանի ֆունտ թէյ կար իւրաքանչիւր արկղում։

517, Երկու աւազաններում 765 վեդրօ ջուր կար. երբ որ մէկից 98 վեդրօ ջուր հանեցին, միւսից էլ՝ 145 վեդրօ, այն ժամանակ առաջինում 5 անգամ երկրորդից աւելի մնաց։ Քանի վեդրօ ջուր կայ իւրաքանչիւր աւազանում։

518. Երկու թւերի գումարը 536 է, եթէ մէկի վրայ աւելացնենք միւսի եռապատիկը, գումարը 1000 կլինի։ Գտնել այս թւերը։

519. Դպրոցում տղաները աղջիկներից 5 անգամ աւելի են։ Ո՞րքան տղայ և ո՞րքան աղջիկ կայ, եթէ յայտնի է, որ աղջկները 28-ով պակաս են տղաներից։

520. Երկու ամբարներում 196 փութ ալիւր կար, մի ամբարի մէջ միւսից 6 անգամ աւելի կար, մի ամբարից այնքան փութ լցրին միւսի մէջ, որ երկուսի մէջ հաւասար չափով ալիւր մնաց։ Միւս ամբարը քանի փութ ալիւր լցրին։

521. Մի կին 12 արշ. չիթ և 18 արշ. քաթան գնեց և բոլորի համար 9 ր. 84 կ. վճարեց։ Ի՞նչ արժէ չթի արշինը և ի՞նչ քաթանինը, եթէ չթի արշինը 28 կոպէկով աժան է քաթանից։

522. Նոյն գնանոց երկու թօփ մահուդի արժէքը 392 ռուբ է՝ արշինը 4 ռուբ. հաշւելով։ Քանի արշին կար իւրաքանչիւր թօփում, եթէ առաջինում 22 արշ. երկրորդից աւելի կար։

523. Շրջիկ մրգաւաճառը զամբիւղում 160 հատ խնձոր կիտրոն եւ նարինջ ունէր—խնձորներ 52-ով կիտրոններից աւելի, իսկ կիտրոններ 6-ով նարինջներից աւելի։ Ամեն մէկից քանի հատ ունէր նա։

Հաւասար չափով վեր առած զանազան իրերի քանակութեան գտնելն ըստ նրանց ընդհանուր արժէքի եւ ըստ արժէքի նրանց իւրաքանչիւրի։

524. Դպրոցի համար գնած են հաւասար քանակութեամբ ընթերցարաններ, թուաբանական խնդիրների ժողովածուներ և այբբենարաններ և վճարած է 9 ր. 75 կ. իւրաքանչիւր տեսակից որքան գիրք է գնած, եթէ ամեն մի ընթերցարանի գինը 35 կ. է, ամեն մի թուաբանական խնդիրների ժողովածուինը 25 կ., ամեն մի այբբենարանինը 15 կ։

525. Երկու եղբայրներ իրար մէջ 128 ռուբլի այնպէս բաժանեցին, որ նրանցից մէկն այնքան 3-անոց թղթադրամ ստացաւ, որքան միւսը՝ 5-անոց։ Ո՞րքան փող բաժին ընկաւ ամեն մէկին։

526. Երեք հաւասար խումբ բանւորներ 846 ռուբ. աշխատանքի վարձ ստացան, առաջին խմբի իւրաքանչիւր բանւորը 25 ռուբ. ստացաւ, երկրորդինը՝ 32 ռուբ. և երրորդինը 37 ռուբ։ Քա՞նի մարդ կար իւրաքանչիւր խմբի մէջ։

527. Տանտիկինը 5 ռուբլի 84 կոպէկի մանր շաքար գնեց քաղցրաւենու (մուրաբի) համար՝ ֆունտը 14 կոպէկով և բալ՝ ֆունտը 18 կոպէկով. Նա շաքար 12 ֆունտ աւելի գնեց բալից։ Քանի ֆունտ շաքար գնեց տանտիկինը և որքան բալ։

528. Քսակում 3-անոց և 5-անոց թղթադրամներ կան՝ ընդամենը 320 ռուբ. գումարի։ Ո՞րքան կայ իւրաքանչիւր տեսակից, եթէ 3-անոցները 8-ով աւելի են 5-նոցներից։

529. Վաճառականը 942 ռուբլով 2 թոփ զանազան տեսակ մահուդ գնեց, որոնցից կարմիրը 16 արշինով աւելի էր կապոյտից։ Քանի արշին մահուդ կայ իւրաքանչիւր թոփի մէջ, եթէ կարմիր մահուդի արշինին վաճառականը 9 ռուբ. վճարեց, իսկ կապոյտի արշինին՝ 5 ռուբլի.

Օգտի զատելը արժողութիւնից

530. Շրջիկ մրգավաճառը 9 ր. 10 կոպէկի նարինջներ ու կիտրոններ ծախելով իւրաքանչիւր 50 կոպէկին 15 կ. օգուտ ստացաւ։ Ո՞րքան էր նրա ստացած ամբողջ օգուտը։

Բացատրութիւն։ Ծախքից ստացած փողի մէջ (9 ր. 10 կ) կայ հաւասար թւով թէ 50 կոպէկանոցներ, որոնք առքի գինն են նշանակում և թէ 15 կոպէկանոցներ, որոնք օգուտն են նշանակում, հետևաբար օգուտը առքի գնից զատելու համար՝ պէտք է 15 կոպ. և 50 կոպ. այնքան անգամ վեր առնել, որքան անգամ որ 65-ը կայ 9 ռուբլի 10 կոպէկի մէջ։

531. Հաց թխելիս 18 ֆունտ ալիւրին 5 ֆունտ այրւածք է գալիս։ Ո՞րքան ալիւր պէտք է շաղւել՝ 161 ֆունտ հաց ստանալու համար։

532. Առևտրականը հնացած ապրանքը 8 ր. 76 կոպ. ծախելով, իւրաքանչիւր ռուբլուն 27 կոպ. վնաս արաւ։ Ո՞րքան վնաս ստացաւ նա։

Համապատասխան (համեմատական) բաժանում

533. Երեք շրջիկ մրգավաճառներ միասին մի քանի ֆունտ մորի գնեցին 5 ր. 20 կ. առաջին մրգավաճառը 17 ֆունտ վեր առաւ, երկրորդը՝ 28 ֆունտ։ Ո՞րքան պէտք է վճարէ նրանցից ամեն մէկը.

534. Որմնադիրների 3 խումբ փողոցը քարելու համար 420 ռուբ. ստացան. առաջին խումբը 15 օր բանեց, երկրորդը՝ 12 օր և երրորդը՝ 8 օր։ Ո՞րքան փող ստացաւ իւրաքանչիւր խումբը։

535. Երկու թէյավաճառներ միասին 72 ֆունտ թէյ գնեցին. մէկը 87 ռուբ. տւեց, միւսը՝ 129 ռուբլի։ Քանի ֆունտ ստացաւ ամեն մէկը։

Հանդիպում

536. Երկաթուղու երկու կայարաններից միաժամանակ դուրս եկան երկու գնացք՝ ապրանքատար և մարդատար. առաջինը մի ժամում 16 վերստ էր անցնում, երկրորդը՝ 34 վերստ։ Մի ժամում քա՞նի վերստ պակասեց նրանց միջև եղած տարածութիւնը։ Քա՞նի ժամ յետոյ նրանց միջև եղած տարածութիւնը 200 վերստ կպակասի։ Քա՞նի ժամ յետոյ գնացքները միմեանց կհանդիպեն, եթէ կայարանները միմեանցից 650 վերստ հեռաւորութեան վրայ են գտնւում։

537. Գետից երկու նաւամատոյցներից, որոնց միջև տարածութիւնը 480 վերստ է, միաժամանակ միմեանց հանդէպ ելան երկու շոգենաւեր։ Առաջինը կարող է այդ ամբողջ տարածութիւնը 20 ժամում անցնել։ Քա՞նի ժամ յետոյ կհանդիպին շոգենաւերը, եթէ երկրորդ շոգենաւը մի ժամում 16 վերստ է անցնում։

538. Երկու կառապաններ խճուղիով 7 ժամ ճանապարհ գնալուց յետոյ միմեանց հանդիպեցին։ Առաջինը մի ժամում 8 վերստ էր անցնում, երկրորդը՝ 10 վերստ։ Գտնել նրանց դուրս եկած տեղերի միջև տարածութիւնը։

539. Երկու քաղաքների միջև եղած տարածութիւնը 630 վերստ է. այդ քաղաքներից միմեանց հանդէպ միաժամանակ դուրս եկան երկու գնացքներ՝ պոստային և ապրանքատար։ Առաջինը կարող է այս քաղաքների միջև եղած ամբողջ տարածութիւնը 9 ժամում անցնել, իսկ միւսը՝ 18 ժամում։ Ո՞րքան ժամանակ յետոյ գնացքները միմեանց կը հանդիպեն։

540. Երկու քաղաքների միջև տարածութիւնը 448 վերստ է. այս քաղաքներից իրար հանդէպ դուրս եկան երկու գնացքներ՝ մարդատարն ու արագընթացը և միմեանց հանդիպեցին 8 ժամ յետոյ։ Ժամը քա՞նի վերստ էր անցնում մարդատար գնացքը, եթէ արագընթացը մի ժամում 35 վերստ էր անցնում։

541. Միմեանցից 657 վերստ հեռաւորութեան վրայ գտնւած երկու քաղաքներից միաժամանակ երկու գնացք, արագընթացն ու մարդատարը միմեանց հանդէպ դուրս եկան. առաջինը անցնում էր մի ժամում 17 վերստ երկրորդից աւելի։ Ո՞րքան վերստ էր անցնում իւրաքանչիւր գնացք մի ժամում, եթէ յայտնի է, որ նրանք 9 ժամ յետոյ հանդիպեցին։

542. Երկու գնացքներ միմեանց հանդէպ դուրս գալով երկու զանազան տեղերից, որոնց միջև տարածութիւնը 476 վերստ է, հանդիպեցին 7 ժամ յետոյ։ Ո՞րքան ժամ էր անցնում իւրաքանչիւր գնացք, եթէ երկրորդը առաջինից 3 անգամ արագ էր գնում։

Աւազան

543. Աւազանը երկու խողովակ ունի. առաջին խողովակով մի րոպէում 14 վեդրա է լցւում, իսկ երկրորդով 11 վրդրօ։ Երկու խողովակով որքան ջուր է լցւում մի րոպէում։ Քա՞նի րոպէ յետոյ երկու խողովակները 350 վեդրա ջուր են լցնում։ Քա՞նի րոպէ յետոյ երկուսը միասին կլցնեն 675 վեդրա տանող աւազանը։

544. Փայտէ ջրամբարը, որ 384 վեդրօ ջուր է տանում, երեք ծորակ ունի։ Առաջին ծորակից մի րոպէում 6 վեդրա ջուր է դուրս թափւում, երկրորդից՝ 8 վեդրա և երրորդից՝ 10 վեդրա։ Քա՞նի րոպէ յետոյ կդատարկւի ջրամբարը, եթէ բոլոր ծորակները միաժամանակ բացւած լինին։

545. Աւազանը 720 վեդրա ջուր է տանում. մի խողովակով նա 4 ժամում կլցւի, միւսով՝ 6 ժամում, երրորդով՝ 12 ժամում։ Քա՞նի ժամում կլցւի աւազանը, եթէ բոլոր երեք խողովակները միաժամանակ բացւած լինին։

546. Աւազանը 960 վեդրա ջուր է առնում. եթէ միաժամանակ բոլոր երկու խողովակները բացւած լինեն, նա 16 ժամում կլցւի, իսկ եթէ նրա մի խողովակը բացւած լինի, կլցւի 24 ժամում։ Քանի ժամում միւս խողովակը կլցնէ աւազանը։

547. Փայտէ ջրամբարը երկու խողովակ ունի։ Մէկով ջրամբարը մի րոպէով լցւում է 13 վեդրա ջուր, իսկ միւսից ջրամբարից մի րոպէում դուրս է թափւում 8 վդդրա։ Քա՞նի վեդրա ջուր կհաւաքւի ջրամբարի մէջ մի րոպէում, եթէ երկու խողովակներն էլ բացւած լինին։— Քա՞նի րոպէ յետոյ երկու խողովակներով մի րոպէում 115 վեդրա ջուր է հաւաքւում։ Քա՞նի րոպէում կլցւի 435 վեդրա ջուր տանող ջրամբարը, եթէ երկու խողովակներն էլ միաժամանակ բացւած լինին։

548. Աւազանը 810 վեդրա ջուր է առնում. առաջին խողովակով մի ժամում 35 վեդրա է լցւում, երկրորդով, 48 վեդրա, իսկ երրորդից մի ժամում դուրս է թափւում 53 վեդրա ջուր։ Ո՞րքան ժամանակւայ մէջ ջրամբարը կլցւի, եթէ միաժամանակ բոլորը բացւած լինին։

549. 840 վեդրա ջուր առնող աւազանը մի խողովակով 8 ժամում է լցւում, իսկ միւսով դատարկւում է 12 ժամում։ Քա՞նի վեդրա ջուր կըլցւի դատարկ աւազանի մէջ, եթէ երկու խողովակներն էլ բացւած լինեն 7 ժամւայ ընթացքում։ Ո՞րքան ժամանակւայ մէջ կլցւի աւազանը, եթէ միաժամանակ երկու խողովակներն էլ բացւած լինին։

550. Վեդրա առնող ջրհորի ջուրը պէտք էր դուրս թափել։ Մի ժամում 93 վեդրա դուրս էին թափում, իսկ ներս էր լցւում մի ժամում 8 վեդրա ջուր։ Քա՞նի ժամ յետոյ կդատարկեն ջրհորը։

Ճանապարհին միմեանց հասնելու վերաբերեալ

551. Առաւօտեան ժամը 9-ին գետի նաւամատոյցից մի շոգենաւ մեկնեց. ժամը 2-ին նրա ետեւից ճանապարհ ընկաւ մի ուրիշ շոգենաւ, որ ժամը 24 վերստ անցնելով, առաջինին հասաւ գիշերւայ ժամը 12-ին։ Ժամը քա՞նի վերստ էր անցնում առաջին շոգենաւը։

552. Մի քաղաքից մի ուրիշ քաղաք գնալու համար խճուղիով տարբեր ժամանակներում դուրս եկան երկու կառք։ Մէկը առաջ դուրս գալով, ժամը 9 վերստ էր անցնում, միւսը՝ 12 վերստ։ Առաջին կառքից քանի ժամ յետոյ դուրս եկաւ երկրորդ կառքը, եթէ նրան հասաւ դուրս եկած քաղաքից 72 վերստ հեռաւորութեան վրայ։

553. Մի քաղաքից դէպի միւս քաղաքը ուղարկեցին երկու շոգենաւ պօստային և ապրանքատար՝ մէկը միւսից 4 ժամ ուշ։ Առաջինը կարող է երկու քաղաքների միջի 240 վերստ տարածութիւնը 16 ժամում անցնել, իսկ միւսը՝ 20 ժամում։ Ո՞րքան ժամանակից յետոյ պօստային շոգենաւը կհասնի ապրանքատարին։

554. Երկաթուղային արագընթաց գնացքը երկու քաղաքների միջի 825 վերստ տարածութիւնն անցնում է 15 ժամում, իսկ ապրանքատարը՝ 33 ժամում։ Ապրանքատարը ցերեկւայ ժամը 12-ին դուրս եկաւ, իսկ արագընթացը՝ 5 ժամ ուշ։ Քանի ժամ յետոյ կհասնի մարդատարին։

555. 765 սաժէն վառելափայտ կրելու համար առաջ 27 ֆուրգոն էին վարձած եղել, իսկ 5 օր յետոյ էլ՝ դարձեալ 13 ֆուրգոն։ Քանի օրում կրեցին բոլոր վառելափայտը, եթէ յայտնի է, որ իւրաքանչիւր ֆուրգոն օրը 3 սաժէն էր կրում։

556. Խճուղին 620 սաժէն տարածութեան վրայ կարգի գնելու համար 8 մարդ վարձեցին։ 4 օր յետոյ տեսան, որ

նշանակած ժամանակին այս աշխատանքն աւարտելու համար 7 մարդ էլ պէտք է վարձել։ Քանի օրում կարգի դրեց ճանապարհը, եթէ իւրաքանչիւր բանւոր օրը 10 սաժէն էր կարգի դնում։

557. 818 վեդրօ ջուր առնող լիցուն ջրամբարը դատարկելու համար առաջ երկու խողովակ բացին, իսկ 10 րոպէ յետոյ՝ դարձեալ երկու։ Քանի րոպէ յետոյ կըդատարկւի ջրամբարը, եթէ առաջին երկու խողովակներից իւրաքանչիւրը մի րոպէում 13 վեդրօ ջուր էր դուրս տանում, իսկ երկրորդներից իւրաքանչիւրը՝ 18 վեդրօ։

Խ ա ռ ն ո ւ ր դ

558. Խառնել են երկու տեսակ իւղ՝ 32 ֆունտ 38-ական կոպէկանոց և 45 ֆունտ 45 կոպէկանոց։ Ո՞րքան արժէ բոլոր խառնած իւղը։

559. Թէյավաճառը խառնեց 37 ֆունտ թէյ 2 րուբլիանոց 16 ֆունտ 5 րուբլիանոց թէյի հետ։ Բոլոր խառնուրդը ծախելով, նա 5 րուբլի օգուտ ստացաւ։ Ի՞նչ գնով էր նա ծախում խառնուրդի ֆունտը։

560. Երկու տեսակ ալիւր խառնեցին. 52 ֆունտ 4 կոպէկանոց և 68 ֆունտ 7 կոպէկանոց. այս բոլոր ալիւրը ծախեցին 84 կոպ. վնասով։ Քանիսո՞վ ծախեցին խառնուրդի ֆունտը։

561. Գինեվաճառը վեդրօն 7 րուբլիանոց 24 վեդրօ գինու վրայ լցրեց 5 վեդրօ ջուր։ Նա ո՞րքան օգուտ կամ վնաս կստանայ, եթէ բոլոր խառնուրդի վեդրօն 6 րուբլով ծախելու լինի։

562. Մրգավաճառը 47 ֆունտ 9 կոպէկանոց խաղողի հետ 16 ֆունտ ուրիշ տեսակ խաղող խառնեց։ Ամբողջ խառնուրդի ֆունտը 12 կոպէկով ծախելով, 1 ր. 9 կոպ. օգուտ ստացաւ։ Ի՞նչ արժէ միւս տեսակ խաղողի ֆունտը։

563. Մրգավաճառը երկու տեսակ կակալ խառնեց՝ 32 ֆունտ 18 կոպէկնոց և մի քանի ֆունտ 25 կոպէկանոց։ Բոլոր խառնուրդը ծախելով, 8 րուբ. 50 կոպէկով նա 76 կոպ. վնաս ստացաւ։ Քանի ֆունտ միւս տեսակ կակալից խառնուրդի մէջ կար։

---

564. Միմեանց հետ հալել են երկու կտոր արծաթ՝ առաջինը երկու ֆունտ քաշ ունէր 80 յարգի (պրօբի), երկրորդը 8 ֆունտ 70 յարգի։ Որոշել ստացած խառնուրդի յարգը։

565. Հալել խառնել են 5 գրւանքայ ոսկի 84 յարգի՝ 1 գրւանքայ 60 յարգի ոսկու հետ։ Ի՞նչ յարգի խառնուրդ ստացւեց նա։

566. 5 ֆունտ 84 յարգի արծաթը հալել խառնել են 2 ֆունտ պղնձի հետ։ Ի՞նչ յարգի խառնորդ ստացւեց։

567. Հալել խառնել են 3 ֆունտ զուտ ոսկի 7 ֆունտ 60 յարգի ոսկու և 2 ֆունտ պղնձի հետ։ Որոշել խառնուրդի յարգը։

568. Վարպետը հալել խառնել է 5 ֆունտ արծաթ 84 յարգի և 7 ֆունտ արծաթ ցածր յարգի, և ստացել է 70 յարգի խառնուրդ։ Ի՞նչ յարգի էր եղել արծաթի երկրորդ կտորը։

Նիւթերի եւ գների տարբերութիւնների հետեւանքները

569. Կապալառուն մի կալւածատիրոջից 35 սոմար գարի գնեց, միւսից նոյն գնով՝ 48 սոմար։ Ո՞րքան ստացաւ իւրաքանչիւր կալւածատէր, եթէ երկրորդին 156 րուբլով աւելի է վճարւած՝ քան թէ առաջինին։

570. Վաճառականը մահուդի թօփի համար 875 րուբլի է խնդրում։ Եթէ առաջ այս թօփից 17 արշին կտրած չլինէին, վաճառականը 994 րուբ. գին կդնէր։ Քանի արշին մահուդ կար այդ կտորի մէջ։

571. Մի արկղ թէյին 238 ռուբ. գին էին դրել, բայց որովհետև գնողի մօտ 184 ռուբ. կար, նրան արկղում եղածից 27 ֆունտ պակաս թէյ տուին: Քա՞նի ֆունտ կար արկղում:

572. Եթէ 25 քարէտախտակ գնելու լինիմ, մօտս 45 կոպէկ կմնայ. եթէ 28 այդպիսի քարէտախտակ գնելու լինիմ, բոլոր փողերս կծախսեմ: Ո՞րքան փող ունիմ:

573. 5 դիւժին աթոռին ու 1 դիւանին 112 ռուբ. գին էին դրել, իսկ նոյն տեսակ 3 դիւժին աթոռին և նոյն դիւանին՝ 76 ռուբլի: Ի՞նչ արժէր աթոռների դիւժինը և ի՞նչ դիւանը:

574. Եթէ 15 ֆունտ սուրճ և 1 գլուխ շաքար առնելու լինիմ, վճարը 9 ռուբ. 75 կոպ. կլինի. եթէ 7 ֆունտ նոյն տեսակ սուրճ և նոյն շաքարի գլուխը գնելու լինիմ, վճարը 6 ռուբ. 95 կոպ. կլինի: Ի՞նչ քաշ ունի շաքարի գլուխը, եթէ ֆունտը 18 կոպ. արժէ:

575. Վաճառականը մի գնողի 39 ֆունտ թէյ և 12 փութ շաքար ծախեց 213 ռուբլով. մի ուրիշին էլ նոյն գնով 27 ֆունտ թէյ և 12 փութ շաքար ծախեց՝ 177 ռուբլով: Ի՞նչ գին ունէր թէյի ֆունտը և ի՞նչ շաքարի փութը:

Հաւասարեցման եղանակ

576: Առաջին անգամ գնեցին 15 արշ. մահուդ և 12 արշ. թաւիշ և բոլորի համար վճարեցին 225 ռուբլի. երկրորդ անգամ նոյն կտորներից, նոյն գներով մեկական արշին գնեցին և վճարեցին 17 ռուբլի: Ո՞րքան արժէ մահուդի և ո՞րքան թաւշի արշինը:

Բ ա ց ա տ ր ո ւ թ ի ւ ն: Այս և նմանօրինակ խնդիրները լուծելիս պէտք է գնոյթներն այնպէս հաւասարեցնել, որ նրանց տարբերութիւնը միայն մի տեսակ առարկայի քանակի և գնի մէջ լինի: Եթէ 1 արշ. մահուդի և 1 արշ. թաւշի համար 17 ռուբ. է վճարուած, այն ժամանակ 15 անգամ աւելի գնոյթի (կարելի է նաև 12-ին հաւասարեցնել) համար, այսինքն՝ 15 արշ. մահուդի և 15 արշ. թաւշի համար պէտք է վճարել 15 անգամ 17 ռուբլի, այն է՝ 255 ռուբլի: Երկրորդ շատացրած գնոյթը համեմատելով առաջինի հետ, տեսնում ենք, որ թաւշի 3 արշինը 30 ռուբլի արժէ և այլն:

577. Ինը չետվերտ հաճարի և 12 չետվերտ վարսակի համար պէտք է 102 ռուբ. վճարել, իսկ 18 չետվերտ վարսակի և 7 չետվերտ վարսակի համար՝ 136 ռուբլի: Ի՞նչ արժէ մեկի և միւսի չետվերտը:

578. Չարչին մի գիւղում 9 հաւ և 28 ճուտ գնեց 7 ռուբ. 35 կոպէկով, իսկ միւս գիւղում՝ նոյն գներով 4 հաւ և 7 ճուտ՝ 2 ռուբլի 45 կոպէկով: Ո՞րքան վճարեց չարչին մի ճուտի համար.

---

579. Եթէ շրջիկ մրգավաճառը ծախէ իր մօտ գտնուած բոլոր նարինջները հատը 7-ական կոպէկով, 45 կոպ. օգուտ կստանայ, իսկ եթէ հատը 9 կոպ. վճարէ, 1 ռուբ. 35 կոպ. օգուտ կստանայ: Քա՞նի նարինջ ունէր մրգավաճառը:

580. Արշինը 15 կոպէկով չիթ գնեցի, մօտս 42 կոպ. մնաց: Եթէ ես չթի արշինը 18 կոպէկով գնէի, իմ բոլոր կանխիկ փողերս պէտք է վճարէի: Քա՞նի արշին չիթ գնեցի ես:

581. Մրգավաճառը մի քանի ֆունտ կակալ ծախեց՝ ֆունտը 24 կոպէկով և 36 կոպ. օգուտ ստացաւ: Եթէ մրգավաճառը ֆունտը 21 կոպէկի ծախէր, այդ վաճառքից ոչ օգուտ և ոչ էլ վնաս կստանար: Քա՞նի ֆունտ կակալ էր նա ծախել:

582. Հանդերձավաճառանոցում մի քանի միօրինակ վերարկու կար. եթէ իւրաքանչիւր վերարկուն 12 ռուբլով

ծախելու լինէր, բոլորի վաճառքից 20 րուբլի վնաս կստանար, իսկ եթէ հատը 15 րուբլով ծախելու լինէր, վնասը կըծածկէր և 40 րուբլի էլ օգուտ կստացւէր։ Քանի՞ վերարկու կար և ի՞նչ էր նրանց գինը։

583. Ուսուցիչը դասատուն մտնելով հաշւեց, որ եթէ իւրաքանչիւր աշակերտի 9 թերթ թուղթ տայ, 27 թերթ կպակասի, իսկ եթէ իւրաքանչիւրին 7 թերթ տայ, մօտը 49 թերթ կմնայ։ Քանի՞ աշակերտ կայ դասարանում։

584 Երկու արկղների մէջ հաւասար չափով կակալ են լցրել՝ փութը 25 կոպէկանոց և 18 կոպէկանոց։ Առաջին տեսակի բոլոր կակալի գինը 1 րուբլի 12 կոպէկով աւելի էր երկրորդ տեսակի բոլոր կակալի գնից։ Քանի՞ փութ կակալ կար երկու արկղներում։

Շ ա հ ո ւ վ ն ա ս

585. Բանւորը վարձւեց այն պայմանով, որ իւրաքանչիւր բանած օրւայ համար 70 կոպ. ստանար, իսկ իւրաքանչիւր չբանւած օրւայ համար գործատիրոջը 25 կոպ վճարէր։ 2 շաբաթ յետոյ բանւորի հետ հաշիւ տեսան, և նա 5 րուբ. 5 կոպ. ստացաւ։ Քանի՞ օր բանեց նա։

Բ ա ց ա տ ր ո ւ թ ի ւ ն։ Պէտք է հետևեալ հարցերը առաջարկել. ո՞րքան փող կստանար բանւորը, եթէ բոլոր երկու շաբաթւայ մէջ աշխատէր. չբանւած օրերի պատճառով ո՞րքան փողից զրկւեց. ո՞րքան փող կորցրեց նա 1 չբանւած օրւայ պատճառով։ (Չբանւած օրւայ պատճառով բանւորը զրկւեց ոչ միայն 70 կոպ. օրավարձից, այլ և ինքը վճարեց 25 կոպ. գործատիրոջը, հետևաբար նա չբանւած օրւայ պատճառով ընդամենը 95 կոպ. էր վճարում)։ Քանի՞ օր նա չբանեց և քանի՞ օր բանեց։

586 Սայլապանը յանձն առաւ 35 լամպ կրել, այն պանով, որ իւրաքանչիւր անվնաս տեղ հասցրած լամպի համար նրան 20 կոպ. վճարէին, իսկ իւրաքանչիւր կոտրած լամպի համար նրանից 65 կոպ. առնէին։ Հաշիւ տեսնելիս նա կրելու համար 3 րուբ. 60 կոպ. ստացաւ։ Քանի՞ լամպ անվնաս տեղ էր հասցրել նա։

587. Եղբայրս ինձ առաջարկեց 27 խնդիր լուծել հետևեալ պայմանով. իւրաքանչիւր ուղիղ լուծած խնդրի համար նա ինձ պէտք է 8 կոպ. վճարէր, իսկ իւրաքանչիւր չլուծած խնդրի համար ես պէտք է նրան 5 կոպ. վճարէի։ Այս աշխատութիւնը վերջացնելուց յետոյ՝ եղբայրս ինձ 1 րուբ. 12 կոպ. վճարեց։ Քանի՞ խնդիր լուծեցի ես։

588 Վարպետը իւրաքանչիւր բանած օրւայ համար 5 րուբ. է ստանում և օրը 2 րուբ. ծախսում։ Երեք շաբաթ անցնելուց յետոյ վարպետը 23 րուբլի հաւաքեց։ Քանի՞ օր բանեց վարպետը։

Ենթադրութիւնով լուծելու եղանակ

589. 49 սաժէն ցարասի (կէչի) և մայրի վառելափայտի համար 305 րուբ. է վճարւած, ցարասի վառելափայտի սաժէնը 8 րուբ. արժէր, իսկ մայրի վառելափայտինը՝ 5 րուբլի։ Ո՞րքան վառելափայտ է գնւած ամեն մի տեսակից։

Բ ա ց ա տ ր ո ւ թ ի ւ ն. Ենթադրենք թէ՝ բոլոր 49 սաժէնը ցարասի էին, այն ժամանակ այդ ամենի գինը $49\times8=392$ րուբլի կլինէր, բայց ծախած վառելափայտի հետ ստացւած է 305 րուբլի, այսինքն՝ 87 րուբլով պակաս. այս աւելորդ փողը, այն պատճառով է ստացւել, որովհետև մայրի վառելափայտի ամեն մի սաժէնի գինը 3 րուբլով աւելացրել ենք. այսպիսով գտնում ենք, որ մայրի վառելափայտ այնքան է գնւած, որքան անգամ որ 87-ի մէջ 3 րուբլի կայ, այսինքն՝ $87:2=29$ սաժէն, իսկ կէչի $49-29=20$ սաժէն։ Կարելի է ցարասի վառելափայտը փո-

խարինել մայրի վառելափայտով, խնդրի լուծման ընթացքը նոյնն է։

590. Գործարանում 119 բանւոր և բանւորուհի են բանում։ Իւրաքանչիւր բանւոր շաբաթը 8 րուբլի է ստանում, իսկ իւրաքանչիւր բանւորուհի՝ 5 րուբլի։ Գործարանում ո՞րքան բանւոր և բանւորուհի կայ, եթէ նրանք բոլորը միասին շաբաթը 856 րուբլի են վաստակում։

591. Հայրը 36 հատ 3 ու 5 կոպէկանոց պղնձէ դրամներ տւեց որդուն՝ ընդամենը 1 րուբլի 42 կոպէկ։ Այս դրամների իւրաքանչիւր տեսակից քանի հատ ստացաւ որդին։

592. Խառնել են երկու տեսակ 38 ֆունտ կակաւ՝ մի տեսակի ֆունտը 16 կոպէկանոց, միւս տեսակինը՝ 25 կոպէկանոց։ Բոլոր խառնուրդը ծախել էին առանց շահ ու վնասի 7 րուբլի 43 կոպէկով։ Քանի ֆունտ կակաւ խառնեցին իւրաքանչիւր տեսակից։

Փոխանակութեան եղանակով լուծում

593. Գնւած է 18 ֆ. թէյ և 24 փ. շաքար 270 րուբլով. շաքարի փութը թէյի ֆունտից 3 անգամ աւելի գին ունի։ Ի՞նչ արժէ թէյի ֆունտը և ի՞նչ շաքարի փութը։

Բացատրութիւն։ Այս խնդիրը երկու եղանակով կարելի է լուծել. կամ շաքարը հաւասար արժէքի թէյով փոխարինելով, կամ, ընդհակառակը, թէյը, շաքարով փոխարինելով։ Վեր առնելով 24 փ. շաքարի փոխարէն 24 անգամ 3 ֆ. թէյ՝ հաւասար արժէքի, կտեսնենք, որ 18 ֆ. թէյը և 72 ֆ. նոյն տեսակից թէյը կամ թէ՝ 90 ֆ. թէյը 270 ր. արժէ, իսկ 1 ֆունտը 270:90=3 րուբ. և այլն։

594. 18 ֆ. բալի և 8 հաղարջի վճարւած է 3 րուբ. 42 կոպ։ Ի՞նչ արժէ բալի ֆունտը և ի՞նչ հաղարջինը, եթէ

յայտնի է, որ բալի 3 ֆունտն այնքան արժէ, որքան որ հաղարջի 5 ֆունտը։

595. Տանտիկինը $1^1/_2$ դիւժին կերակրի արծաթէ գդալ գնեց և 2 դիւժին՝ թէյի և բոլորին 120 րուբ. վճարեց։ Ի՞նչ վճարեց տանտիկինը իւրաքանչիւր թէյի գդալին և ի՞նչ կերակրի գդալին, եթէ յայտնի է, որ թէյի գդալը երկու անգամ աւելի աժան է կերակրի գդալից։

596. Գնւած է 12 արշ. մահուդ և 29 արշ. թաւիշ 256 րուբլով։ Ո՞րքան է վճարւած բոլոր մահուդին և ո՞րքան բոլոր թաւշին, եթէ յայտնի է, որ թաւշի արշինը մահուդի արշինից 4 անգամ աւելի թանկ արժէ։

597. 24 բանւոր և 45 բանւորուհի մի շաբաթւայ աշխատանքի համար 396 րուբ. ստացան կալւածատիրոջից։ Որոշել իւրաքանչիւր բանւորի և իւրաքանչիւր բանւորուհու շաբաթական վաստակած փողի քանակը, հաշւի առնելով, որ 9 բանւորուհի այնքան ստացան, որքան 4 բանւոր։

Տ ո կ ո ս

598. Ո՞րքան տոկոս կամ օգուտ կստացւի 500 րուբլուց մի տարում, $6^0/_0$ հաշւելով։ Ո՞րքան 3 տարում, 5 տարում։

599. Ո՞րքան շահ կբերէ 3 տարում 400 րուբլին, $5^0/_0$ հաշւով, $7^0/_0$, $12^0/_0$ հաշւով—կամ եթէ 5 տարի շահեցնենք։

600. Առևտրականը 700 րուբլով գնած ապրանքից $15^0/_0$ օգուտ ստացաւ։ Քանի րուբլի է կազմում ամբողջ օգուտը։

601. Դպրոցում 200 երեխաներ են սովորում. աղջիկները բոլոր սովորողների $28^0/_0$ են կազմում։ Ո՞րքան են աղջիկները։

602. 300 րուբլով գնած ապրանքի վաճառքից առև-

տրականը $15^0/_0$ վնաս ստացաւ։ Քանի րուբլով է ծախւած ապրանքը։

603. 9 րուբլով գնւած ձմերուկների վաճառքից խանութպանը՝ $15^0/_0$ վնաս ստացաւ։ Քանիսով ծախեց նա ձմերուկը։

604. Տարին որքան շահ կստացւի 25 րուբլուց $8^0/_0$, $10^0/_0$, $12^0/_0$-ի հաշով. 40 րուբլուց՝ $10^0/_0$, $3^0/_0$, $8^0/_0$ ի հաշւով. 150 րուբլուց՝ $6^0/_0$, $8^0/_0$, $12^0/_0$-ի հաշւով։

605. 500 րուբլին տարին 25 րուբլի շահ է բերում. քանի տոկոս է կազմում այս (այսինքն՝ քանի րուբլի եկամուտ է գալիս ամեն մի 100 րուբլուն)։

606. Երկու տարում 350 րուբլին 84 րուբլի շահ է բերում։ Տարեկան ինչ տոկոս է այս կազմում։

607. Վաճառականը քաթանի արշինը 46 կոպէկով է ծախում, Քանի տոկոս զեղչ է անում, եթէ նա ինքը արշինը 50 կոպէկով էր գնում։

608. Դպրոցում 80 սովորող կայ. Նրանցից 16 աշակերտներ դասընթացն աւարտեցին։ Քանի տոկոս է կազմում այս։

609. Վաճառականը առևտրի համար 800 րուբ. փոխ առաւ. 2 տարի յետոյ նա այդ փողերը վերադարձրեց տոկոսի հետ միասին, ընդամենը 960 րուբլի։ Ի՞նչ տոկոսով էր նա փողը առել։

610. $4^0/_0$ով շահով տրւած ո՞ր դրամագլուխը տարին 28 րուբլի շահ է տալիս, 16 րուբլի՞, 36 րուբլի՞։

611. Ո՞ր դրամագլուխը տարին 20 րուբլի շահ է բերում, $5^0/_0$ հաշւելով.—56 րուբլի շահ, $7^0/_0$ հաշւելով, 42 րուբլի շահ, $6^0/_0$ հաշւելով։

612. Վաճառականը մի արկղ թէյի վաճառքից 48 ր. օգուտ ստացաւ։ Քանիսով էր ծախւած թէյը, եթէ օգուտը ամբողջ գնի $10^0/_0$ կազմեց։

613. Քանի տարում 300 րուբլին $8^0/_0$-ով 96 րուբլի շահ կբերէ։

614. Քանի տարում $6^0/_0$-ով տրւած 850 րուբլին 255 րուբլի շահ կբերէ։ 153 րուբլի շահ։ 408 րուբլի շա՞հ

615. Քանի տարի յետոյ 400 րուբ. դրամագլուխը $5^0/_0$ ով շահի հետ միասին 480 րուբլի կկազմէ։ 560 րուբլի՞, 620 րուբլի՞։

616. Մէկը 600 րուբլի $15^0/_0$-ով փոխ առաւ. պարտքը վճարելիս նա 870 րուբլի տւեց։ Ո՞րքան ժամանակ յետոյ վճարւած է պարտքը։

XIII. ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԽՆԴԻՐՆԵՐ

617. Կալւածատէրը գարի ու ցորեն ցանեց։ Գարու հունձքը մէկին ութը եղաւ, իսկ ցորենինը՝ մէկին հինգ։ Ցորենի հունձը 360 փութ եղաւ։ Ո՞րքան եղաւ գարու հունձքը, եթէ գարին ցորենից 28 փութ աւելի էր ցանւած եղել։

618. Քսաներեք փութ շաքարին և 38 ֆունտ թէյին 214 ր. վճարեցին. շաքարի փութը 4 րուբլի աւելի գնահատւեց թէյի մէկ ֆունտից։ Ո՞րքան աւելի վճարեցին բոլոր շաքարի համար բոլոր թէյի համար վճարածից։

619. Տասնհինգ արշին մահուդի և 24 արշին դրապի համար վճարւած է է 147 րուբ։ Ո՞րքանով բոլոր մահուդը թանգ է բոլոր դրապից, եթէ այս երկու տեսակ կտորների արշինը միասին 8 րուբ. արժէ։

620. Առևտրականը խառնեց փութը 6 րուբլիանոց 28 փութ վարսակ՝ փութը 3 րուբլիանոց՝ 15 փութ վատ վարսակի հետ։ Բոլոր խառնուրդը ծախելով նա 41 րուբլի վնաս ունեցաւ։ Ի՞նչ գնով էր ծախում առևտրականը խառնւած վարսակի փութը։

621. Երեք գիւղացիներ միասին 63 արշ չիթ գնեցին՝

արշինը 14-ական կոպէկով։ Առաջին գիւղացին երկրորդից 4 անգամ աւելի գնեց, իսկ երրորդը՝ առաջինից 9 արշին աւելի։ Իւրաքանչիւր գիւղացի որքան փող ծախսեց։

622. Պղնձագործի վրայ մէկ ինքնաեռը 12 րուբլի է նստում, իսկ ինքն այդ ծախում է 16 րուբլով։ Քանի ինքնաեռ ծախեց պղնձագործը, եթէ յայտնի է, որ նա 9 ինքնաեռի արժէքի չափ օգուտ ստացաւ։

123. Մրգավաճառը 8 ֆունտ 20 կոպէկանոց ընկոյզը՝ խառնեց 20 ֆունտ լաւ տեսակի ընկոյզի հետ։ Խառնուրդը նա ծախեց 9 ր 28 կ, իւրաքանչիւր ծախսած րուբլուց 16 կ. վաստակ ստանալով։ Ի՞նչ արժէ լաւ տեսակի ընկոյզի ֆունտը։

624. Պղնձագործը 84 գրւանքանոց 10 կտոր պղինձ գնեց, և իւրաքանչիւր 15 գրւանքին 7 րուբլի վճարեց. այս պղնձի չորրորդ մասը նա բանեցրեց տասը գրւանքանոց ամանների համար, իսկ մնացած պղնձից մի քանի 18 գրւանքանոց ինքնաեռ շինեց։ Նա բոլոր ինքնաեռներն ու ամանները ծախելով, 119 րուբլի վաստակ ունեցաւ։ Ի՞նչ գնով էր ծախում պղնձագործը ինքնաեռի հատը, եթէ ամանի հատին 6 րուբլի էր առնում։

625. Վագոնից 816 փութ ալիւր կրելու համար 9 բանւոր էին վարձել, որոնցից իւրաքանչիւրը մի ժամում 16 փութ կարող էր կրել. 3 ժամ յետոյ 3 հոգի էլ աւելացրին, որոնք առաջին բանւորների չափ էին աշխատում։ Քանի ժամ յետոյ վագոնը դատարկւեց։

626. Մէկը բանքից 98 հատ 5 և 10 րուբլիանոց ոսկէդրամներ ստացաւ, որոնց գումարը 605 րուբլի էր։ Քանի հատ 5 և 10 րուբլիանոց դրամ ստացաւ նա։

627. Նոյն գնանոց 3 կտոր մահուդին վճարւած է 736 րուբլի։ Ո՞րքան արժէ իւրաքանչիւր կտորը, եթէ առաջինը 24 արշինանոց է, երկրորդը՝ 32, իսկ երրորդը՝ առաջին երկու կտորներից 20 արշին կարճ է։

628. Երկու քաղաքներ իրարից 810 վերստ հեռու են. այս քաղաքներից երկու գնացքներ միաժամանակ իրար հանդէպ դուրս եկան. մէկը մի ժամում 23 վերստ էր անցնում, իսկ միւսը 31 վերստ։ Ի՞նչ տարածութեան վրայ իրարից հեռու կը լինին գնացքները 7 ժամ յետոյ և երբ կը հանդիպեն իրար։

629. Տանտիկինը քաղցրաւենիքի համար ֆունտը 16 կոպէկով մորի և ֆունտը 12 կոպէկով հաղարջ գնեց։ Բոլոր գնածների համար նա 7 ր. 44 կ. վճարեց, այնպէս որ գնած մորը 15 ֆունտ աւելի էր հաղարջից։ Քանի ֆունտ գնեց տանտիկինը իւրաքանչիւր տեսակից։

630. Մոսկւայից դուրս եկաւ մի գնացք՝ որ ժամը 35 վերստ էր անցնում. 9 ժամ յետոյ՝ նրա ետևից ժամը 56 վերստ անցնող մի ուրիշ գնացք ճամփայ ընկաւ։ Ի՞նչ տարածութիւն կանցնի առաջին գնացքը՝ մինչև երկրորդի հասնելը։

631. Աւազանը 2 խողովակ ունի. մի խողովակով մի րոպէում 29 վեդրօ ջուր է թափւում աւազանի մէջ, իսկ միւսով մի րոպէում դուրս է թափւում 14 վեդրօ։ Առաջ բացւած է եղել երկու խողովակներն էլ, իսկ 8 րոպէ յետոյ՝ միայն առաջինն էր բաց, որ աւազանը լցրեց կէս ժամում։ Աւազանը որքան վեդրօ ջուր է տեղաւորում։

632. Առևտրականը իր դրամագլխից տարէնը 18% եկամուտ ստանալով, 3 տարում ընդամէնը 432 րուբլի օգուտ ունեցաւ։ Ի՞նչ դրամագլուխ ունէր առևտրականը։

633. Ութը ձիերի մի շաբաթում 840 գրւանքայ խոտ կերցրին։ Ո՞րքան խոտ կերթայ 12 ձիերի 5 օր կերցնելու համար։

634. Վաճառականը 8 ր. 64 կոպէկի մի թօփ չիթ գնեց՝ արշինը 18 կոպէկի հաշւով. այս չթի քառորդ մասի արշինը նա ծախեց 15 կոպէկով։ Ի՞նչ գնով պէտք է ծա-

խէ նա չքի մնացորդը՝ ամբողջ թուից 1 ր. 44 կ. վաստակ ունենալու համար։

635. Հինգ արշ. քաթանի և 21 արշ կտաւի վճարուած է 4 ր 40 կ., 10 արշ քաթանի և 6 արշ կտաւի վճարուած է 3 ր 40, կ։ Քաթանի արշինը որքան աւելի թանկ է կտաւի արշինից։

636. Երկու եղբայրներ 127 ր ունեն. եթէ մեծը 6 ր պակաս ունենար. իսկ փոքրը՝ 7 ր աւելի, այն ժամանակ երկուսն էլ հաւասար չափով կունենային։ Ո՞րքան փող ունի ամեն մէկը։

637. Վաճառականը երկու տեսակ ծխախոտ ծախեց. առաջին տեսակը 9 ր 30 կ, իր ծախսած իւրաքանչիւր 50 կոպէկից 12 կ օգուտ ստանալով. երկրորդ տեսակը ծախեց 6 ր 84 կ, իր ծախսած իւրաքանչիւր 75 կոպէկից 18 կ վնաս ստանալով։ Ի՞նչ արժէ ծխախոտի իւրաքանչիւր տեսակը իրան, վաճառականին։

638. Երկու թւերի գումարը 465 է. եթէ մեծ թիւը բաժանենք փոքրի վրայ, քանորդը 12 կը լինի, իսկ մնացորդը՝ 10։ Գտնել այս թւերը։

639. Մսի $^3/_4$ ֆունտը 18 կոպէկ արժէ։ Տասը րուբլուց որքան պէտք է յետ ստացւի, եթէ այդ մսից կէս փութ առնուի։

640. Քեռին իր քրոջ որդուն առաջարկեց 28 խնդիր լուծել այն պայմանով, որ իւրաքանչիւր ուղիղ լուծած խնդրի համար քեռին նրան 25 կոպ վճարէր, իսկ իւրաքանչիւր սխալ լուծածի համար քրոջ որդին քեռուն 10 կոպ վճարէր։ Նա քեռուց ոչ մի կոպէկ չստացաւ։ Նա քանի խնդիր ուղիղ էր լուծել։

641. Խանութպանն ուզում էր իր բոլոր փողերով 12 փաթեթ թէյ գնել, բայց միայն 7 փաթեթ գնեց, և նրա մօտ մնաց 3 ր 75 կ։ Խանութպանն իր մօտ որքան փող ունէր։

642. Վաճառականը արշինը 50 և 35 կոպէկնոց քաթան էր ծախում. գնողը մի տեսակից 6 արշին աւելի առաւ՝ քան միւս տեսակից, բայց երկու տեսակների համար էլ հաւասար չափով վճարեց։ Իւրաքանչիւր տեսակից որքան քաթան է գնուած։

643 Մէկը գնել է 18 արշ. թաւիշ, 28 արշ կապոյտ մահուդ և 39 արշ սև մահուդ և այդ բոլորի համար նա վճարել է 270 ր. Թաւշի արշինը երկու անգամ աւելի թանկ է կապոյտ մահուդի արշինից և երեք անգամ աւելի թանկ է սև մահուդի արշինից։ Ի՞նչ արժէ թաւիշի արշինը։

644. Կաթ ծախողը հաշւեց, որ եթէ ինքը սերի բաժակը 23 կոպէկով ծախէ, 95 կոպէկ օգուտ կունենայ, իսկ եթէ 18-ական կոպէկով ծախէ, ոչ օգուտ և ոչ էլ վնաս կունենայ։ Ի՞նչ գնով ծախեց նա սերի բաժակը, եթէ 57 կոպէկ վնաս ստացաւ։

645. Մի դիւժին թէյի և մի դիւժին ճաշի գդալների վճարել են 48 ր. մի ուրիշ անգամ նոյն գնով 5 դիւժին թէյի և 2 դիւժին ճաշի գդալների վճարեցին 132 ր։ Ի՞նչ արժէ թէյի և ինչ ճաշի գդալը։

646. Խառնել և հալել են 60 յարգի 3 ֆունտ արծաթ՝ 80 յարգի 7 ֆունտ արծաթի հետ։ Ի՞նչ յարգի արծաթ դուրս եկաւ։

647. Գիւղացին 75 րուբլով գնած ձին ծախեց $8^0/_0$ վնասով։ Ձին ինչ գնով է ծախուած։

648. Գրքի գինը 80 կոպէկ է, բայց 60 կոպէկով է ծախւում։ Քանի $^0/_0$ զեղչ են անում։

649. Տասնհինգ տետր են կարել, և իւրաքանչիւրին գնացել է $^3/_8$ դաստա թուղթ։ Քանի թերթ թուղթ է գնացել այդ տետրակներին։

650. Գնել են մի օգմա թուղթ. սրա $^2/_5$ բաժանել են աշակերտներին թելադրութեան համար, իսկ մնացած

թղթի $^3/_4$-ը՝ խնդիրների համար։ Վերջը քա՞նի թերթ թուղթ մնաց։

651. *Մի կին իր բոլոր փողերի $^5/_9$ ծախսեց 7 ֆունտ մորի՝ ֆունտը 15 կոպէկով գնելու համար, իսկ մի ուրիշ կին իր փողերի $^7/_{12}$-ը ծախսեց 9 ֆունտ հաղարջ գնելու համար՝ ֆունտը 14 կոպէկի հաշւով։ Ո՞րքան փող ունէր նրանցից իւրաքանչիւրը։*

652. *Վարդապետը շաբթէնը 12 ր է վաստակում, իսկ ծախսում է շաբթէնը 7 ր։ 23 շաբաթ անցնելուց յետոյ՝ նրա մօտ 19 ր մնաց։ Քա՞նի օր նա աշխատեց։*

653. *Վաճառականը երկու թօփ նոյն գնանոց կալենկոր գնեց. մէկը 48 արշինանոց էր, միւսը՝ 29. առաջին կտորի համար նա երկրորդ կտորի համար վճարած 1 ր 52 կ աւելի վճարեց։ Ի՞նչ գնով նա պէտք է ծախէ կալենկորը՝ երկու կտորներից 3 ր 8 կ օգուտ ստանալու համար։*

654. *840 ր գումարով գնել են ցարասի վառելափայտ՝ սաժ. 7 րուբլով. այս փայտից 79 սաժէն 553 րուբլով ծախելուց յետոյ՝ մնացածի սաժէնը 9 րուբլով ծախեցին։ Ո՞րքան վաստակ ունեցան բոլոր փայտը վաճառելով։*

655. *Մայրենի լեզւի և Թւաբանութեան 28 ձեռնարկների վճարել են 7 ր 40 կ. մայրենի լեզւի իւրաքանչիւր ձեռնարկն արժէ 35 կ., իսկ Թւաբանութեանը՝ 15 կ։ Այս ձեռնարկների իւրաքանչիւր տեսակից ո՞րքան են գնել։*

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԾՒԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

497.—*3 ր. 55 կ.*
498.—*768 վերստ*
499.—*21 արշ.*
500.—*992 րուբ.*
501.—*585 փութ*
502.—*56 ձի*
503.—*8 մարդ*
504.—*60 օր*
505.—*269 րուբ.*
506.—*128 արշ.*
507.—*Քաթանի տէրը՝ 260 ր.*
508.—*8 ֆունտ*
509.—*15 րուբ.*
510.—*ա. և բ. 55-ական ր. գ. 69 րուբ.*
511.—*57 հաւ, 119 ճուտ*
512.—*3 րուբ., 6 րուբ.*
513.—*3 ր. 75 կ. 1 ր. 80 կ.*
514.—*58 արշ., 86 արշ.*
515.—*9 կոպ., 6 կոպ.*
516.—*15 ֆ., 45 ֆ., 60 ֆ.*
517.—*233 վեդրօ, 533 վեդ.*
518.—*232 և 304*
519.—*7 աղջիկ, 35 տղայ*
520.—*70 փութ*
521.—*16 կոպ., 44 կոպ.*
522.—*38 արշին 60 արշ.*
523.—*32 նար., 38 կիտր.*
524.—*13 ական հատ*
525.—*48 րուբ., 80 րուբ.*
526.—*9 բանւոր*
527.—*13 ֆունտ, 25 ֆնտ.*
528.—*37 և 5*
529.—*57 արշ., 73 արշ.*
530.—*2 րուբ. 10 կոպ.*
531.—*126 ֆունտ*
532. *3 րուբ. 24 կոպ.*
533.—*1 ր. 36 կ., 1 ր. 60 կ., 2 ր. 24 կ.*
534.—*180 րուբ., 144 րուբ.*
535.—*29 ֆունտ, 43 ֆնտ.*
536.—*50 վերստ։ 4 ժամ յետոյ։ 13 ժամ յետոյ։*
537.—*12 ժամ*
538.—*126 վերստ*
539.—*6 ժամ*
540.—*21 վերստ*
541.—*28 վերստ, 45 վերստ*
542.—*17 վերստ. 51 վերստ։*
543.—*25 վեդրա։ 14 րոպէ. 23 րոպէ*
544.—*16 րոպէ։*
545.—*2 ժամում։*
546.—*48 ժամում։*
547.—*5 վեդրա։ 23 րոպէ յետոյ։ 87 րոպէում։*
548.—*27 ժամում։*
549.—*24 ժամում։*
550.—*6 ժամ յետոյ։*
551.—*16 վերստ։*
552.—*2 ժամ։*
553.—*16 ժամում։*
554.—*$5^1/_2$ ժամ յետոյ։*
555.—*14 օրում։*

556.—6 օրում։
557.—19 րոպէ յետոյ։
558.—32 ռուբ. 41 կոպ.
559.—3 ռուբլով
560.—5 կոպէկով։
561.—6 ռուբ. օգուտ։
562.—11 կոպէկ։
563.—14 ֆունտ։
564.—72 յարգի։
565.—80 յարգի։
566.—60 յարգի։
567.—59 յարգի։
568.—60 յարգի։
569.—առաջինը 420 ռուբ. երկր. 576 ռուբ.
570.—142 արշին։
571.—119 ֆունտ։
572.—3 ռուբ. 75 կոպ։
573.—18 ռուբ., 32 ռուբ.
574.—25 ֆունտ
575.—3 ռուբ 8 ռուբ.
576.—7 ռուբ., 10 ռուբլի
577.—4 ռուբ., 6 ռուբ.
578.—15 կոպ.
579.—45 հատ։
580.—14 արշին.
581.—9 ֆունտ։
582.—20 վերարկու, 260 ր.
583.—38 աշակ։
584.—32 ֆունտ։
585.—9 օր քանեց։
586.—31 լամպ։
587.—19 խնդիր։
588.—13 օր.
589.—մայրի 29 սաժ, ցարասի 20 սաժէն։
590.—87 տղամարդ, 32 կին։
591.—17 հատ 5 կոպէկանոց 19 հատ 3 կոպէկանոց,
592.—15 ֆունտ 1-ին տես. 23 ֆունտ 2-րդ տեսակից, 23 ֆ. 2-դ տեսակից։
593.—Թէյի ֆունտը 3 ռուբ., շաքարի փութը 9 ռուբ։
594.—Բալի ֆունտը 15 կ, հաղարջինը 9 կոպ։
595. 2 ռուբ., 4 ռուբլի։
596.—24 ռուբ., 232 ռուբ.
597.—9 ռուբ., 4 ռուբ.
598.—30 ռուբ։ 90 ր. 150 ր.։
599.—1) 60 ր., 2) 84 ր., 3) 144 ր. 4) 100 ր. 5) 140 ր. 6) 240 ռուբլի։
600.—442 ռուբլի։
601.—56 աղջ.
602.—246 ռուբլի։
603.—7 ռուբ. 65 կոպ։
604.—2 ռուբլի։
605.—5%
606.—12%
607.—8%
608.—20%
609.—10%
610.—700 ռուբ.
611.—400 ռուբ.
612.—480 ռուբ.
613.—4 տարում։
614.—5 տարում։
615.—4 տարի յետոյ։
616.—3 տարի յետոյ։

Յ. ՏԷՐ ՄԻՐԱՔԵԱՆԻ ԾԱԽՈՒ ԳՐՔԵՐԸ

1. Դասաւանդութեան ուղեցոյց, օրինակելի դասեր և նրանց տեսութիւնը . . . . . 1 ր. —
1. Իրաշրջանների վերածուած թուաբանական խնդիրների ժողովածու։ Ա. և Բ. տարիների դասընթաց, յօրինեց Յ. Տէր Միրաքեան . . . . 30 կ.
3. Հարտման-Ռուզամի Իրաշրջանների վերածուած թուաբանական խնդիրների ժողովածու։ Գ. տարուայ դասընթաց։ Գ բարեփոխած և դարձեալ լրացրած տպագրութիւն . . . . . 35 կ.
4. Նոյն գրքի Դ. տարուայ դասընթաց . . . 35 կ.
5. Դեռահասների ազատ ընթերցանութիւնը (սատութիւն և յանձնարարելի ու մերժելի գրքի համառօտ գրախօսութիւն). . . . . 40 կ.
6. Դեռահասներն ինչ կարդան (350 յանձնարարելի ու մերժելի գրքերի համառօտ գրախօսութիւն) . 25 կ.

1364

2013

<< Ազգային գրադարան >>
NL0064689